տաս ինձ ուր էիր յայսմ գիշերի. և ընդէր բարկացուցեր զԱծ: Եւ անկաւ առ ոտս հօրն և ասէ. մեղայ Այ: Այս երեք տարի է որ շնայի: և ասէ հայրն զինչ գործ առնէիր դու՝ որ Ած յինէն ծածկէր զքո չարն: Եւ նա ասէ, թէ իմ սովորութն էր, որ ամէն գիշեր երթայի շընալ. ես ութ կանոն սաղմոսն, և զապաշխարութն շարականսն լալով ասէի, և հառաչանօք՝ի գալն. և յայսմ գիշերի ծուլացոյց զիս սատանայ՝ և անյուսացոյց. թէ չէ օգուտ: Ես բնաւ զԱծ ոչ յիշեցի՝ և ոչ սաղմոսեցի: Ասէ հայրն, օրհնեալ է Ած, և ողորմութի և քաղցրութի նորա. որ ոչ կամի զկորուստ մարդոյ: Արդ հետև Ած ոչ յիշեաց զայն շնութի քո: Նոյնպէս և ես թողումքեզ յայսմ գիշերիս ողորմութեն Այ: Եւ նա դարձաւ առ Ած՝ և եղև այր կատարեալ ապաշխարութբ և բարեգործութբ:

ԽԹ Կատուն հագաւ՝ փիլոն, և եղև
կրօնաւոր. և ասաց մկանցն թէ
այլ չհեղում արիւն զի մտայ 'ի կարգ-
ապաշխարութեն: Ասեն մկունքն,
թէ քեզ ոչ հաւատամք կեղծաւոր.
թէ զանտոնի կարգն իմն քո տեսա
նեմք: Յետ այսորիկ գնաց 'ի ջրա
ղացն ընկաւ թէ ես գիրբն եմ, գայ
ին մկունքն և ասէին. ով դու չար,
ոչ հաւատամք, թէ դու գիրբն ես:
Յետ այսորիկ կատուն եղև սուտ
մեռեալ և յանցս մկանցն պառկե
ցաւ. գան մկունքն և ասեն. ով դու
նենգաւոր. թէ և պարկ լինի մոր
թիդ քո ոչ հաւատամք. ոչ թո
ղուս զսովորական չարութին քո:
Ցուցանէ: Որ մարդ չար չթողու
զիւր չար սովորութին:

Ծ Վարժեալ զկատուն լուսակալ
դրին թագաւորին իմն ոսկի
բարձին. և արարին զաքիսն. և
տային նշ̃ 'ի կերակրոյ թագաւո
րին. և ասացին, թէ թողէք զսովո
րական բանս ձեր. և նոքա ասացին
թէ

Թէ ոսկւով ծածկէք զմեզ կամ մար
գարտով. ոչ կարեմք թողուլ զսովո
րական բանս մեր: Օ ի կատուին բե
րանն յորժամ տեսանէ զմուկն գո
ղայ՝ և ոչ կարէ թողուլ չքնթմք
թալն: Յուցանէ: Ով է զոր փոր
ձես որ չէ բարքն անարատ. այլ
նենգաւոր և չար. թէպէտ կեղ
ծաւորի, և բարի առնէ մի հաւա
տար նմա. զի ոչ կարէ թողուլ զսո
վորական բարս իւր: Օ ի խխատ բա
րի մարդ պիտի, որ խոնարհեցուցա
նէ զկամս իւր և զսիրտն. զի ասէ
Ի. ծաղաւնն. թէ սովորութի բե
րան լինի, և ամրանայ:

Որորդ մի կայր յարեւմուտս. և ծա
ետես զկրիոյն յարեւելս. և յա
բեաւ գնաց առնուլ զնա. և սկսաւ
յամիլ՝ ի Ջանապարհին յայլ գործ:
և աշակերտքն նր. փություցանէին,
զի մի փախիցէ որսն: Նա ասէ մի
վախէք զի անմիտ է և ոսկրապատ՝
անզօր՝ ոչ կարէ փախչիլ. և յոր
ժամ երթամք մեր է նա: Յուցա
նէ

նէ։ Այս է որսորդն սատանայ է․ և կրիայն մեղաւորքն են․ և ասէ սատանայ ընդ դևսն իւր։ Մի փութայք, և ջանայք․ թէ երթամք՝ ի տուն կախարդաց՝ և գրկողաց՝ արբեցողաց՝ շնացողաց՝ և սպանողաց՝ և այլ մեղաւորաց․ զի նոքա զհետ մեր են կամաւ․ և առնեն զկամս մեր, վն նոցա մի նախատիք։ Պնացէք 'ի մջ մարդիկքն, և ընդ նոսա կռուեցարուք․ զի որ առնու ըզ-բերթն և զքաղաքն, այն երկիրն նր է։

ծբ Երեք ուղտք, և երեք աղուէսք եղեն եղբարք․ և 'ի ճանապարհին գտին երեք հաց մծ։ Եւ ուղտքն առին զհացն․ և յարուցեալ բարձրացուցին զգլուխս իւրեանց՝ աղաղակելով ուտէին զհացն։ Եւ աղուէսքն լալով անկեալ առ ոտս նց․ և ուղտքն կոխեալ սատակեցին զաղուէսսն։ Ցուցանէ։ Այս է մեծատունք և իշխանք ծծեն զզօրութին ժողովրդեան․ և շատք այնք են որք աղքատանան յաւելադատելոյն․ Թա

Թագաւորաց՝ և իշխանաց՝ և առաջ
նորդաց. Հանց որ նեղին 'ի չքաւո
րութեն, և մեռանին:

Կին մի գնայր ընդ դրախտն իւր ծգ
վն̃ մրգաց. և ասէ ցորդին իւր,
թէ ով որդեակ իմ անկեալ իվեր.
և պահէ զմանր ձագերն, մինչև
գամ ես: Յարեաւ որդին և շարեց
'ի մի չուան զամէն ձագերն. և կա
պեաց զծայր չուանին յոտս հաւ
ուն. և ինքն խաղում եղաւ: Եւ
ահա գայ 'ի վերուստ ուրուրն.
վերացոյց զմինն ձագերուն. և
գնաց իհետ մայրն և այլ ձագերն:
Ցուցանէ: Թէ Քս̃ համբարձաւ
յերկինս. և վստահացաւ զժողո
վուրդս 'ի Թագաւորն, և յիշ
խանսն, և յառաջնորդսն. և նոքա
զբաղեցան 'ի հող և 'ի մեծութի
աշխարհի. և չտանին խնամք հօտին
Քի̃: Եւ սատանայ լցոյց մեղօք
առ հասարակ, և իջոյց 'ի դժոխս:
Մեղաւ Թագաւորն, և իշխանն,
և առաջնորդն, և ժողովուրդ. զե

ամենեքեան խոտորեցան, և անպի-տանացան. քանզի ժողովուրդն կապեալ է 'ի թագաւորն և յառաջ-նորդն։

ծգ Էր հարսն մի հեզ և համբերող. և կամեցան փորձել զնա սկե-սուրն և սկեսրայր նո՟ր։ Ասէ մինն ա՛րի փակեա՛ զդուռն. ասէ մէկ այլն՝ թէ բաց զդուռն. զի ծուխ է և նեղէ զմեզ. և դարձեալ ասէ թէ փակեա՛ և բաց. և նա սկսաւ փակել և բանալ. յերկարեց և ո՛չ բարկացաւ։ Ցուցանէ։ Թէ առա-քեալքն, և մարգարէքն, և հայ-րապետքն, համբերութե՟ և հեզու-թե՟ քարոզեցին աշխարհի։

ծե Մի՛ն աղքատ երթայր 'ի գիւղ մի. հիւանդացաւ 'ի ճանապարհին և աղաչէր զԱ՟Ծ պատրաստել նմա դրաստ, որ 'ի շէն տանին զնա։ Եւ ահա գայ ոմն չարաբարոյ հարկանէ զնա բրով և ասէ։ Արի՛ յոտն և շալկէ զքուռակս. զի ո՛չ կարէ գալ 'ի հետ մօր

մօր

մօր իւրոյ: Նա յարեաւ և լայր՝ զի ոչ կարէր կանգնիլ: Եւ այրն չարաբարոյ ոչ դադարէր 'ի հարկանելոյ զնա: Եւ նա ասէ, վայ ինձ Ած իմ, զի փոխանակ թեթեւացուցանելոյ՝ ծանրացուցեր ի վերայ իմ վիշտս: Ցուցանէ: Թէ շատք աղաչեն զԱծ և ակն բարւոյ ունին յԱծ և 'ի մարդկանէ. և գայ տանջանք և վիշտք ի վերայ նոցա:

Այր մի մեծատուն գնաց խնամէխօս որդւոյ իւրոյ ըստ սովորութե՟ մարդկան: Եւ այր կուսան զոր խնդրէր, և նստաւ 'ի մօտն. և ասէ առնն՝ ով հայր օրհնեալ է գաւառ քո: Ապա թէ՝ գաս որ 'ի հաւօմ երթամք բարւոք առնես. և անտի դառնամք յեկմ. և ապա եղանեմք 'ի վերայն: Ասէ այրն. վայ որդեակ, ես եկի որ զքեզ տանիմ. իսկ դու զիս հանես 'ի տանէ իմմէ: Ցուցանէ: Թէ Քս եկն 'ի խնդիր մարդկան. նա երթայ ա՟մ ոք ընդ որ իւր կամքն է. ոչ լսեն կոչմանն Քրի: ծզ

Այ

Ա՛յս է առակս, և վարդապետեն յոր ժամ երթայ ՚ի քարոզել և չգայ ոք ՚ի քարոզն։

ծէ Աղուէսն եգիտ ուղտ մի մերձ ՚ի մահ. և նստաւ առ նա։ Եւ ասէ ուղտն. ինչ պէտս նստար աստ ո՛վ դու աղուէսուկ։ Ասէ աղուէսն զի թէ մեռանիս ես կերակրիմ ՚ի մնէ քումմէ։ Եւ ասէ ուղտն ո՛վ գերի աղուէսուկ. չկարես ժուժել զի պարանոցս իմ երկայն է. և հոգիս յուշ ելանէ։ Ասէ աղուէսն, թէ ես սաստիկ համբերող եմ ազգաւ՝ թէ քառասուն օրն ապաննջես ես աստ նստիմ։ Ցուցանէ։ Թէ պարտ է համբերել վարդապետին. հեզութբ օգտեցուցանել զժողովուրդն. և քաղցրութբ կոչել զմեղաւորսն։ Ո իչկայ մեծ բարութի քան զհամբերութին։ Առաքեալքն, և մարգարէքն՝ և հայրապետքն՝ համբերութբ և երկայնմտութբ զաշխարհս լուսաւորեցին՝ և Աստուծոյ ետուն։

Քահանայ մի գողացաւ զկով այրի ծր
կնոջ միոյ՝ և եած յախոռն.
և կինն իմացեալ, ասէ առ քահա
նայն: Ո՛վ տ՟ր ժամէ ինձ մահու որ
խոստովանիմ յախոռ քո. և երեցն
անցոյց զկովն 'ի ներսին տունն. և
անտի յեկեղեցին: Իսկ կինն ասէ.
ո՛վ տ՟ր, զմահու խոստովանութե՟ն
պարտ է որ յեկեղեցին ասեն: Իսկ
երեցն եհան զկովն 'ի բեմն. և զվա
րագուրն իջեմ քաշեց. իբրև մտան
յեկեղեցին և նստան: Յայնժամ
կինն զվարագոյրն 'ի վեր կալաւ,
և ասէ: Ո՛վ գարշելի, զքեզ կով գի
տէի. արդ պատարագօղ ո՛վ արար
ասա՛ ինձ: Ցուցանէ: Թէ այսպէս
համբերութեամբ և իմաստութ՟բ
պարտ է առաջնորդին քննել՝ և
ստուգել զա՟մ քահանայս. և իմա
նալ զվարս ն՟ց: Որ չէ արժան պա
տարագի ծածկաբար յանդիմա
նել. և չտալ թոյլ խաչել զորդին
Ա՟յ անարժան պատարագօքն՝ և հա
ղորդութ՟բ:

ծթ Այր մի մարդասպան փախեաւ. և գնացեալ անցանէր ը̅ գետն որ կոչի Նեղոս. և տեսեալ յեզր գետոյն զառիւծ մի. և փախուցեալ ելաւ ՚ի ծառ մի մեծ։ Եւ ահա կայր ՚ի ծառն ահագին վիշապ մի. և նա յահէն ՚ի վայրանկաւ ՚ի ծառէն։ Եւ ահա ել ՚ի գետէն կոկորդիլոսն և եկուլ զնա։ Ցուցանէ. թէ չկարէ փախչիլ մեղաւորն ՚ի ձեռացն Այ. որ ոչ զղջանայ և ելանէ ՚ի մեղաց. նա կամ յայս կեանքս կամ յանկեանքն առնու զհատուցումն գործոց իւրոց։ Ապ ասէ յոբ. թէ որ չար է մի յուսասցի անպարտ լինել. և առաւել մարդասպանքն և գողքն։

կ Որինջքն խայտային և զեզինն խրատէին. եթէ ոչ դադարիք յաշխատելոյ։ Ահա եկն թագաւոր գաւառին, և ժողովեալ զերինջսն և սկսան կոտորել. զի ճաշ կազմէին թագաւորին, և զօրացն։ Ահա որ դեռակ.ք մեք մշասաւոր պարապորդ-

պորդ հանգչէիք և դուրանայիք։ Յուցանէ։ Ասեն ամ մեքն ընդդասս ձախակողմանցն. Թէ ահա որդեակք. այդ կայր ձեզ պահեալ. որ 'ի հուրն այրէիք։ Օ իայն կեանքն բոէիք զմարմինս ձեր հանգստեամբ և մեղօք. և զարդարն նախատէիք. դուք այժմ նախատիք։

Մարդն օրէր զատամունս իւր մեծ աշխատութբ, և եամնիւ։ կա

Նա աղուէսն ասէ ընդէր աշխատիս զի առ ժամանակս չկայ կռուոյ բան։ Ասէ վարազն կռուէիր դու գարշելի. զի ես հմուտ եմ պատերազմի։ Նա արդ կարէ պարապել զէնս իւր։ Յուցանէ։ Թէ 'ի յայս կեանս պարտէ զզջանալ և ապաշխարել զմեղս. զի յաւուր դատաստանին չկայ ձարներելոյ կամ ողորմելոյ. ոչ ցուցանեն մեծատունն և յիմար կուսանքն։

կբ Արծուին յորժամ ծերանայ
բարձրանայ մինչեւ ’ի տապ արե
գականն, եւ ջեռմանայ եւ գայ ’ի վե
րուստ մեծ լռութ՟բ։ Եւ իջեալ ’ի
սառն աղբիւր մկրտի. եւ ելեալ
թաւալի, եւ թափի ’ի նմանէ հնա
ցեալ փետուրն նր՟. եւ նա մանկա
նայ եւ նորոգի ամենեւին։ Ցուցանէ
Թ.է ով որ ծերանայ եւ հնանայ.
անօրէնութ՟բ եւ չար գործովք.
պարտի բարձրանալ հոգւով առ
Ա՟Ծ. եւ ջեռմանալ հրով սիրոյ նր՟.
եւ մկրտել զանձն ’ի ջերմ արտա
սուս. եւ լուանալ հառաչանօք զշա
րաւ մեղաց. մեծ յուսով եւ ողոր
մութ՟բն Ա՟Ծ. եւ թափել յինքե
նէ զհնացեալ փետուրն մեղաց. եւ
ազատիլ ’ի դժոխոցն. եւ հասանիլ
բարեացն Ա՟Ծ։ Ոպ՟ վկայէ մարգա
րէն Դաւիթ. կատարէ ’ի բարի
զցանկութ՟ի քո. եւ նորոգէ որպէս
զարծուի զմանկութ՟ի քո։

կգ Արծուին երթայր ընդ երկինս
եւ հարին զնա նետիւ. եւ զարմա
ցաւ

ցաւ թէ ո՞ զայս արար։ Հայեցաւ
և ետես ՚ի նետն զթևն իւր. և
ասէ, վայ ինձ զի ահա յինէն եղև
պատճառ սպանման իմոյ։ Ցուցա
նէ։ Թէ ՚ի մէնջ է նիւթն որով
սպանանէ սատանայ զոգիս մեր. զի
նա յորդորէ ՚ի չարիս, և մեք կա
մաւ և յօժարութ̃բ երթամք զհետ
կամաց ն̃ր։

Ջերմոտ մի էր բազմօրեայ. և կ̅դ̅
խրատեցին զնա. թէ երթ ՚ի
դուռն քաղաքին. և զառաջին
մարդն որ տեսանես, ասա՛ առ նա.
թէ քոյդ ինձ, և իմս քեզ. և գնաց։
Եւ ահա գայր գոդի մի. որ շարաւ
էր անձն ն̃ր ՚ի խոցոյն. և նա դողաց
յահէն։ Եւ ասէ ցնա, ո՛վ եղբայր
հայեաց յԱ̃Ծ. քոյդ քեզ՝ և իմս
ինձ։ Ցուցանէ. Թէ սատանայ
սկսանի անյուսել զձեզ ՚ի մեղս. և
հեռացուցանել յԱ̃Յ՝ ոպ̃ և ինքն
եղև. և դու յայնժամ ասա՛ զա
ռակս առ նա. թէ քո անհաւատու
թիւդ քեզ. իսկ ես անպէտ և մե
ղաւ

ղաւոր եմ։ Բայց զԱ՜ծ ոչ կարեմ
ուրանալ. զի անդադար կոչէ զիս
քաղցրութե՟. թողում զմեղս իմ,
և երթամ առ նա յուսով։

կե Գայլն և աղուէսն եղեն եղբարք՝
և գնացին որսալ զձուկն։ Ասէ
աղուէսն գայլն՝ արկ զագիդ քո ՚ի
գետն զի ըմբռնեսցուք ձկունս. և
էր ժամանակն ձմեռնային։ Իբրև
էարկ գայլն զագին ՚ի ջուրն. պա-
ղեցաւ ջուրն, և կապեաց զագին։
Ասէ աղուէսն. ահա քեւի ա՟մ զօ-
րութբդ ցունց տուր զի ձկունք
բազումք են. քաշէ զագիդ քո.
զի ձուկն բազում է ըմբռնեալ։
Իբրև ցունց ետ հատաւ ագին ՚ի
պաղն. և նա կսկծեալ փայէր
զանձն, և լայր։ Ասէ, վայ ինձ, զի
թափեցայ յագուս. և ձուկն ոչ
ըմբռնեցի։ Յուցանէ։ Թէ այս
պէս կապէ սատանայ մեղօք մինչև
՚ի մահ. և թափին յայս կենացս,
և յայն։

Ասէ

Ասի յառակաց թէ աղուէսն գը
տեալ թուղթ մի գրեալ. և
տարաւ առ գայլն, և ասաց։ Այս
չափ ժամանակս աշխատեալ եմ.
և զմարդիկ բարեխօս եմ ձգեալ. և
՚ի պարնէն գիր և հուքմ եմ հա
նեալ. որ յամէն գեղ՝ և յամէն գեհ
ուր հանդիպիս ոչ խար մի.քեզ տան։
և յամէն տուն հաւ մի.քեզ բաժին
հանեն։ Այլ ո՛չ շուն. և ո՛չ մարդ-
քեզ զահմաթ չտան։ Ու այնպէս
խաբեալ գայլուն գնաց զհետ ա-
ղուէսուն։ Ու յորժամ գնացին,
ինքն աղուէսն եկաց ի վ՞ր բլրի միոյ.
յեզր գեղջն. և յուղարկեց զգայլն
՚ի գեղն. թէ գնա՝ առ զքո ոլոֆայն։
Ու ես զթուղթս պահեմ, ով որ
չտայ նա ես ցուցանեմ, որ տան։ Ու
գայլին հաւատացեալ. մինչ դեռ
երթայր յեզր գեղջն. յայնժամ
մարդիկք և շներն ի մէջ առեալ
կամէին սատակել։ Իսկ գայլն ձայ
նեաց առ աղուէսն. թէ բեր զպա
րոնի հուքմն որ տեսնուն այս մար
դիկս և հաւատան. որ պարոնին հրա

մանաւ՟ն եմ եկեալ. իսկ աղուէսն պատասխանի տուեալ ասէ՝ ով գայլ ՚ի գեղջդ կարդացող չկայ՝ լսող չկայ՝ ինչ կայ որ թուղթ բերեմ, և այնմ՟ խաբեալ սատակեցին զգայլն։

կե Աղուէսն խաբէ զգայլն. և տայ նմա թուղթ տանիլ ՚ի տանուտէր գեղջն. և բերէ նմա կերակուր։ Իբրև գնաց գայլն ՚ի գիւղն։ Թափեցան շունքն ի վ՟ր ն՟ր խածատել և վիրաւորել. և փութ փութ արարին։ Եւ իբրև եկն ողորմելի կենօքն՝ ասէ ցնա աղուեսն. ընդէ՞ր ոչ ցուցեր զթուղթն. ցուցի, բայց հազար շուն կայ՝ որ զգիր չգիտէ։ Յուցանէ։ Թէ մի վ՟հէր, և մի ընկնիր ի մ՟ջ բազմաց ագիտաց և աներկիւղաց. այլ իմաստութ՟բ փախիր ՚ի դիւաց և ՚ի նոցին կամարարաց։

կզ Աղուէսն եգիտ զպանիր յորոգայթն։ Ընթայ առ գայլն և ասէ. ո՛վ եղբայր, եկ և առ զպանիրն, և կեր. զի ես ՚ի պաք եմ. և
գնաց

գնաց գայլն առնուլ զպանիրն. և
անկաւ որոգայթն 'ի վիզ գայլոյն.
և պանիրն 'ի դուրս թռեաւ: Առ
աղուեսն, սկսաւ ուտել. ասէ գայլն,
թէ եղբայր գէմ՛ այսօր ուրբաթ
է. մի ուտեր որ չի. բարկանայ
քեզ Ա.ծ: Ասէ աղուէսն. որո
գայթդ 'ի պարանոց քո անկաւ՝ և
այդ է բարկութիւն Ա.յ: Եւ սկսաւ
գայլն ճչել յայսկոյս և յայնկոյս:
Եւ ասէ աղուէսն ցգայլն: Ես այլ
շատ ցանցեցի երբ ըմբռնեցայ: Եւ
ասէ, գայլն վայ ինձ զինեղիմ չարա
չար: Ասէ աղուէսն, ով եղբայր,
դեռ չես վայ՝ մինչև գայ տէր պան
րին: Ցուցանէ: Թէ զգաստ լեր,
որ չխաբուիս 'ի սատանայէ. զինկա
պէ զքեզ սատանայ 'ի մեղս, և 'ի
հեշտութիւն: Յայնժամ ապա տաս
վայ անձին քոյ՝ յորժամ գայ Ք.ս
'ի դատել զերկիր,

Ասի յառակաց՝ թէ թագաւոր մի կթ
կայր. որ ունէր իւրն սիրելի
զօձ մի. որ յամէն օր կարմիր դեկան
մի

մի բերէր Թագաւորին։ Եւ եղև
որդի մի Թագաւորին նոր ծնեալ.
եւ Թագաւորն զմանուկն սնուցա
նէր ի վերայ բարձացն. և առեալ
զօձն արկանէր զպարանոցաւ ման
կանն։ Եւ այնպէս սովորեալ օձն և
մանուկն խաղային իմիասին. և այսպէս
ժամանակս ինչ՝ սիրով խաղային
առ իրեարս։ Իսկ յորժամ մեծա
ցաւ մանուկն կապեալ սուր ընդ
մէջս իւր. յաւուր միում ՚ի խաղալն
իւրեանց համեալ մանկանն զսուրն ե
հար զտուտ օձին. և ընկեց յերկիր։
Յայնժամ զայրացեալ օձին եհար
զնա՝ և ինքն փախեաւ. մեռաւ որդի
Թագաւորին։ Իսկ յետ սգոյն և մխի
թարութե, առաքեաց Թագաւորն
որ գտանէին զօձն, և աղաչէին զնա
գալ ՚ի տեղի բնակութե իւրոյ։ Եւ
ասէ օձն, ով բարի Թագաւոր. ան
դէպ է ինձ գալ առ քեզ. Ո՛ ի քանի
որ հայիս դու ՚ի գերեզման որդւոյ
քոյ. և քանի որ հայիմ ես ՚ի տուտն
իմ, ոչ սրբի մախանքն ՚ի սրտից մե
րոց։ ապայ այս բարի է, որ հեռա
ցայ

ցայ 'ի քէն։ Ցուցանէ։ Ուր նա
խանձ և մախանք շարժի 'ի վ͞ր քո,
դու փախիր անտի, և ապա սրբի մա
խանքն այն։ Եթէ չար ինչ առնես
մարդոյ․ փախիր, և հեռացիր յա
չաց ն͞ր․ և ապա սրբի սիրտ ն͞ր․ զի
դառն ախտ է մախանքն․ և որ կարի
երկիւղած է Ա͞յ․ նա կարէ սրբել
զսրտին զոխն և զմախանսն։

Հ

Այր մի անմիտ և յիմար․ ունէր
դեկան մի․ Առ զդեկանն, և
գնաց 'ի քաղաքն որ գնէ զէշ․ շրջե
ցաւ 'ի քաղաքն և ո՛չ եգիտ էշ միոյ
դահեկանի։ Նա մտեալ 'ի շուկայն
տեսեալ մեծագոյն ձմերուկ մի։ և
ասէ հիացմամբ․ զինչ է այս, և իմա
ցան թէ յիմար է այրն․ ասեն թէ
այս հնդիկ իշու ձուէ․ որ հանէ
հնդկցի էշ մեծագին․ և նա խնդա
լով ետ զդահեկանն և էառ զձմե
րուկն։ Նա պնդեաց ծախօղն թէ վ͞ն
Ա͞յ պատրաստ տար՝ որ չբեկի և
ելեալ փախչի․ և 'ի գնալն դիպաւ
ոտքն 'ի քարն։ Նա զերծաւ ձմե
րուկն

քուկն 'ի ձեռանէ նր̄. գլորեցաւ
'ի թփերն 'ի ներս. և վազեաց նա
պաստակ մի 'ի դուրս՝ և փախչէր.
'ի հետ վազէր՝ և ձայնէր նապաստա
կին՝ և ասէր: Ո՛վ էշ հնդկաց՝ վայ
ինձ մի փախչիր՝ քուր քուր ողորմիր,
և դարձիր առ տէրս: Ցուցանէ:
Թէ այսպէս յիմարեցան քահա
նայք և ժողովուրդք. և թափե
ցան 'ի մտաց. որ զհետ մտաք սուտ
և խաբօղ կենաց աշխարհիս. որ
նման հողմոյ փախչի 'ի մէնջ՝ և նման
երազոյ պակասի: Եւ ջանամք ըմբռ
նել զհեշտութ̄ն և զմեղս աշխար
հիս Եւ լինիմք ողորմելիք:

հա Օձն անտիկնոս եղև հողագործի
մարդոյ միոյ: Եւ եկեալ 'ի գետ
ինչ առեալ 'ի ծոցն զօձն անցանէր
ընդ գետն. և օձն այլ ո՛չ կամեցաւ
ելանել 'ի ծոցոյ նր̄: Եւ գնացին առ
քաղաքն, և արարին դատաստան
իմէջ նց̄: Եւ եկին առ աղուէսն՝
ասեն, արա՛ մեզ դատաստան. իմա
ցաւ աղուէսն զպատճառն, ասաց.

միա

միականն ո՛չ կարեմ դատաստան առ-
նել. ել 'ի ծոցոյն, և երես ընդ երես
զրուցեցէք ինձ զբանն ձեր։ Իբրև
ելեալ եկն։ Ասէ աղուեսն հողագոր-
ծին՝ թէ հար զնա խիթանաւդ՝ որ
կայ 'ի ձեռս քո. եհար և սաստա-
կեաց զօձն. և սկսաւ գալարիլ.
Եկեալ աղուէսն ըղորդեաց զնա
թաթոմն և ասէ, թէ մնտիկնոս ես։
հանցեղ ըղորդ կեցիր։ Ցուցանէ։
Թէ պատրաստ կացէք 'ի նենգաւ-
որ մարդոյ. և մի հաշիւ միաւորու-
թի առնես ընդ նոսա։ Դարձեալ
զայս ցուցանէ, թէ բարուք է. որ
զչար և զնենգաւոր մարդն ըղոր-
դէ դատաւորն։

Կին մի այրի ունէր կով մի. և իւր հբ
խորթն ունէր էշ մի. և զկերա-
կուր կովոյն գողանայր խորթն և
իշոյն տայր։ Եւ կինն աղաչէր զՏէր
զի մեռցի էշն՝ և կովն մեռաւ։ Լայր
կինն, և ասէր. վա՜յ ինձ, զի հակա-
ռակ եղև աղօթից իմոց. մի թէ Տէր
ոչ կարաց ընտրել զէշն և զկովն 'ի
մի

միմեանց։ Ցուցանէ։ Մի՛ աղօթել ընկերի քում չար հասանիլ. զի և քեզ պատահի չար։ Դարձեալ ցուցանէ թէ աղօթեա՛ առ Ա՟ծ, զի ընդ հակառակս կատարէ Ա՟ծ, երբ ոչ լինի աղօթքն 'ի կամն Ա՟յ. ք՟զի նա գիտէ զօգուտն անձանց մերոց։

հգ Առիւծն ետես՝ զի ահա գայլն փախստական ա՟մ կենդանիքն ահիւ մեծաւ։ Եհարց թէ յումմէ դայք հանց փախստական. և նոքա ասեն թէ 'ի մարդոյ. զի նա հալածէ զմեզ։ Իսկ ահա եկն էհաս մարդ մի։ և ասէ առիւծն սպառնալեօք, թէ դու ես մարդն. որ նեղես զամենայն կենդանիսն. և նա ասէ, այո՛ ես եմ մարդն։ Իսկ ասէ առիւծն ընդ մարդն. թէ դու ես մարդն, եկ որ կռուեմք. զի ես քեզ մնայի։ Ասէ մարդն չունիմ աստ զնշան կռուո՛յ. ապա թէ գաս որ կապեմ զքեզ որ չփախչիս՝ զի զառիւծն պարծենկոտեմ լսել գնամ և առնում զնշան կռուո՛յ, և գամ

առ

առաքեզ: Եւ հաւանեցաւ առիւծն
որ կապէ զնա․ և կապեաց մարդն
զառիւծն 'ի ծառ մի․ և սկսաւ
կաղնի մահակով հարկանել զնա։
Եւ ասէ առիւծն, թէ մարդ ես․
թողես մարդ․ ապա սէրտ և անխնայ
հար զթիկունս իմ: զի այս խելացս
այպէս վայելէ։ Յուցանէ, թէ
զօրաւոր մարդիկ խաբէին 'ի տկա
րաց, և տանջէին։ և ինքեանք նախա
տեն զանձինս իւրեանց։ Նոյնպէս
և յաւուրն դատաստանի դասք ան
զեղջ մեղաւորացն․ արդարացու
ցանեն զարդար դատաստանն Ա՟յ․
յորժամ 'ի հուրն առաքէ զնոսա։
Եւ ասեն, թէ այս վայելէ մեզ․ զի
ընդէ՞ր ոչ լսեցաք նմա․ և ոչ արա
րաք զհրամանս և զկամս նր՟։

Առիւծն հիւանդացաւ, երէքն հդ
դայլն 'ի տես․ աղուէսն յամեցւ
նա արջն չարախօսեաց զնմանէ։ Եւ
յորժամ եկն աղուեսն, ասացին ըզ
չարախօսութիւն արջոյն բարեկամք
նորա։ Եւ ասէ առիւծն, ոչ բարե
դա

գաս գարշելի. ընդէր յամեցար։
Ասէ աղուէսն, մի բարկանար թա
գաւոր բարի. զի ահա երդնում
'ի գլուխ քո. զի աշխատութե̃ շրջե
ցայ յա̃մ բժշկապետսն. և ուսայ
հիւանդութե քումդեղ։ Եւ ասէ
առիւծն բարի եկիր, իմաստուն
կենդանի. զինչ է դեղն. և նա ասէ
պիտանի, և դիւրին։ Հրամայեցին
բժշկապետքն՝ թէ հանէք զմորթ
արջուն տաքտաք, և արկէք իվերայ
առիւծոյն. և նա փութով քաշէ
զցաւն 'ի նմանէ։ Եւ հրամայեաց
առիւծն, և կալեալ զարջն՝ սկսան
քարշել զմորթ ն̃ր. և նա վայէր, և
փոքս մեծամեծս արձակէր։ Եւ
աղուէսն ասէ. այդ յերեսդ քո՞ և 'ի
ն̃ր, որ առ թագաւորն զմարդ չարա
խօսէ։ և հանին զմորթն՝ և սատա
կեցաւ արջն։ Ցուցանէ։ Թէ չէ
պարտ՝ որ մարդ 'ի թագաւորաց
տուն և 'ի դատաւորաց մտանէ,
նա զայլոց չարախօսէ. կամ մատնէ։
Այլ մարդ զիւր հոգն հոգայ. և
զիւր մեղքն տեսնու առաջև իւր։

Ասի յառակաց· թէ ուղտ մի, ու Հե
գայլ մի, և աղուէս մի գնացին 'ի
մէկ ճանապարհ· գտին բլիթ մի
հաց· որ անկեալ էր 'ի ճանապար
հորդաց· և ասեն ընդ միմեանս զինչ
արասցուք զայս զի չէ բաւական
մեզ ամենեցուն· ասէ աղուէսն սա
մէկի կերակուր է· և որ աւագն է
'ի մէնջ՝ և աւուրքն հին· նա կերի
ցէ զսա· և հաւանեցան երեքեանն
բանին։ Հարցին ցգայլն, ասա ըզ
թիւ ամացքոց· և նա ասէ, ես այն
գայլն եմ, որ յաւուրս Ջրհեղեղին
նոյ 'ի տապանն էառ զիս։ Իսկ ասէ
աղուէսն, օրհնեալ է Ա̇ծ, իմ թո
ւին ընկերես· ես այն աղուէսն եմ որ
ստեղծ զիս Ա̇ծ, և տարաւ առ ադամ
որ անուանեաց զիս աղուէս։ Իսկ
տարաւ ուղտն զբերանն, և էառ
զբլիթն· և վերացոյց յօդս։ Սկսաւ
ծամել· և ասէ, երբ դուք զայդ կու
սակէք· այս որունքս զոր ես ունիմ չէ
յերեկէն եղած տղայի։ Իսկ յառաջ
անուն եդին ըղտուն բազում և գայ
լուն մարկոս։ և աղուեսուն թէոդո

րոս։ և կամեցաւ գայլն ձգտիլ զի
առցէ զհացն յըղտէն. նա զգլուխն
էառ 'ի ծնկնամէջն՝ և սկսաւ գայլն
կզկնծկտալ. իսկ աղուէսն շուրջ ան
ցանէր, և ասէր բանիւ բազմաւ։
Բարձր է բագոս, կծկտայ մար
կոս. շուրջ անցանէ Թէոդորոս։
Ցուցանէ։ Թէ չէ պարտ աղքա
տին ընդ մեծատանն ձկտիլ՝ և 'ի
կուիւ մտանել. զի ո՛չ կարէ 'ի գլուխ
ելանել։ Ո՞չ և ասեն առակաբանքն։
Խեցգետինն հետ օձին ձկտեցաւ՝
և կորեցաւ. և թէ գրաստ որ գանձ
էր բարձեալ՝ 'ի տղմի ո՛չ անկանի.
բայց օրն վերջին լինի արդար խրա
տունք։

ՀԳ Կապիկն, որ է ապուզայն. սովո
րութի՛ւն ունի. որ զինչ տեսանէ
'ի մարդն զայն առնէ. ետես զի
ձկնորսն ձգեաց զուռկանսն իվ̄ր
ձկանց. և ինքն ևս ձգեաց՝ ըմբռնե
ցաւ 'ի նմա։ Կու ասէ լալով՝ յիրաւի
ըմբռնեցայ 'ի հանց տեղի որ չէի
հմուտ. Ցուցանէ։ Թէ ո՛վ մարդ
մի

մի՛ ձեռնարկաներ՝ և մի՛ ցանկար գործոյ որ չես հմուտ։ Նաև չէ քեզ դէպ թէ մարմնաւոր և թէ հոգևոր աստիճան. զի կորուստ լինի քեզ՝ և ո՛չ շահ։

Արագիլն մեծ բռնութիւն դայ յա ՀԷ
մուսնութիւն հրամանաւն Այ՝
որ ասէ. քանզի սիրէ, որ ո՛ք մնայ.
և տատրակն ո՛չ նստի յոստն կանանչ՝
եթէ մեռանի ընկեր նր։ Ցուցա
նէ օրինակս։ Թէ ով մարդիկ սի
րեցէք զորբութ̃ի և զողջախոհու
թ̃ի։ Բայց վասն որդեծնութ̃ե
մտէք յամուսնութիւն, և մի վասն
աղտեղութ̃ե։

Ագռաւն ժողովեաց զձագս իւր՝ ՀԸ
և խրատէր զնոսա՝ և ասէր. ով
որդեակք, մի՛ լրբիք. պատրաստք
եղերուք 'ի մարդկանէ՝ յորժամ
խոնարհին առնուլ ինչ։ Ասեն ձա
գեր նր. ով մայր մեր՝ զինչ արաս
ցուք. թէ յառաջագոյն լինի մարդն
առեալ զքարն 'ի ձեռն իւր. և ասէ
մայրն

մայրն այժմ գիտեմ որ ապրելոց էք։
Յուցանէ։ Թէ պարտէ պատրաս
տիլ 'ի հն̃ որոգայթիցն սատա
նայի. 'ի նր̃ պատրանացն, և 'ի նենն
գուլթէց նր̃։

ՀԹ Արագիլն՝ և ձայեկն՝ և ոպոպն
զծերացեալ հայրն իւրեանց
դարմանեն՝ սնուցանեն՝ և ծառայ
են. մինչև մանկանայ՝ կամ մեռա
նի։ Յուցանէ օրինակս այս։ Թէ
պարտէ մեծարել և դարմանել ըզ
ծնօղս. և հնազանդիլ։ ոպ̃ և Ա.ծ
հրամայեաց։ Պատուեա՛ զհայր քո
և զմայր. որ զծնօղս անարգէ զԱ.ծ
անարգէ. և զինչ որ 'ի հետ ծնօ
ղաց առնեն հետ Ա.յ են արարեալ։

Ձ Աղուէսն քաղցեաւ և ետես 'ի
հոր մի բուդ քար. կարծեց թէ
պանիր է. անկաւ 'ի ներքս, և սկսաւ
ուտել. և ասէ, վա՛յ ինձ, զի ո՛չ համ
ունի և ո՛չ հոտ։ Յուցանէ։ Թէ
ով մարդ մի անկանի 'ի բուստ մե-
ղաց. զի անշահ իրք է մեղքն, և
ան

անօգուտ. զի յետոյ շատ ապա
շաւես։

Րղոճեան ՚ի գետն անկեալ՝ և լի Ճա
ներ գետապտար. խոստացաւ
Ր.Ճ մարգան մի խունկ. զի հանցէ
զնա ՚ի գետէն. և զերծեալ ՚ի գե
տէն՝ և սկսաւ ՚ի ժխմել. և մոռացաւ
զուխտն զոր եդ Ր.Ճ։ Խաղայր, և
խայտայր յեզր գետոյն, և ասէր.
Թէ Ր.Ծ ինչ կարիս ունի ՚ի ծուխ
խնկին որ յօդս ցնդի։ Իւ ահա շար
ժեցաւ դարափն գետին. և սկսաւ
գնալ իվ՛ր նր. և նա լալով գոչեաց,
և ասէ. ով Ր.Ծ ոչ իմացար զի ես ՚ի
խնդիր էլայ մարգանին որ զքո խուն
ըկն բերեմ՝ զոր ուխտեցի քեզ։ Յու
ցանէ։ Թէ ոչ է պարտ մոռանալ
զուխտն՝ զոր ուխտեաց ոք Ր.Ճ ՚ի
նեղութե իւրում. նա և զհանդեր
ձեալ նեղութին մի մոռանար։

Ճբ

Րղոճեա մի քաղցեաւ, եգիտ
զսառն և զպաղ. ցանկացաւ ՚ի
ձմեռնային աւուրն՝ սկսաւ ուտել
զնա

զնա։ Եւ ասէ. վա՛յ ինձ, զի ահագին գլգլունս և աղաղակս 'ի գլուխս և յատամունս իմ. և 'ի փորս բնաւ ինչ ոչ իջանէ։ Ցուցանէ։ Եւ թէ փառք և մեծութիւն աշխարհիս զերդ երազ է. և միայն զաղաղակն ունին, և զբաղումն. և յետոյ ոչ երևի ուրեք. զի սուտ է և անցաւոր և խաբօղ։

ձգ Իղոճեան եգիտ զբեհմի. և կարծեաց թէ այս է պատմուճանն ադամայ՝ զոր կորոյս. զի գրեալ է լուսաւոր էր. և զգեցաւ զնա ձմեռնային ժամն. նա սպաղեցաւ, և տանջէր զնա՝ և մսէր. և հանեալ կանգնեաց զնա. և սկսաւ ջուր արկանել 'ի նմա. զի կարծեաց թէ ջրոյ ամանէ սա. և ամենևին ո՛չ լցուցանէր։ Որ և բարկացեալ հարկ զնա 'ի խորս ծովուն, և ասէ. երթ 'ի կորուստ, զի կարի անպիտան իցես։ Ո՛չ եղեր զգեստ ամուան. և ո՛չ ձմերայնոյ. և ո՛չ աման ջրոյ. ապա կարծեմ թէ փոր ես դու որովայնամոլ և որ

բե

բեցօղ մարդոյ՝ որ անկուշտ լինի։
Ցուցանէ։ Թէ այսպէս անօգուտ
է փառք աշխարհիս. զի ո՛չ է աստ
պիտանացու՝ և ո՛չ անդ։ աստ մահն
խափէ. և անդ նոր արարածք լինե
լոց է։

Էշ մի էառ զաւանակն իւր. և ձդ
գնաց արածել 'ի մարգ մի ցանկա
լի յանմարդաբնակ տեղի. և ահա
գայ էշ մի որձ. և հոտոտեցաւ 'ի յե
տոյ 'ի յամօթ նր։ Իսկ նա կից էհար
զօրութբն. և էհար զխամծեկ
նր, և ջախջախեաց. նա փախեաւ
որձ էշն՝ և գնաց անտի. և ասէ քու
ռակն լալով. վայ ինձ մայր իմ, զի
տառապանք են աստ միայն. և բա
զում երկիւղ կայ 'ի գազանաց։
Ասա՛ ինձ ընդէր հարեր, և վիրաւո
րեցեր զփառաւորադոյն էշն, որ եկն
առ մեզ։ Ասէ մայրն, ով որդեակ իմ.
մի երկնչիր զի չէ յամէլոց. քանզի
յայն տեղին հոտոտաց, և զայն հոտն
էառ. որ թէ մինչ 'ի ներքին հըն
դիկքն երթայ՝ և կամ 'ի խորասան.

փու

փութայ դառնալ առ մեզ։ Ցուցանէ։ Թէ որ շնայ՝ և գրկէ․ կամ գողանայ․ կամ զայլ մեղս գործէ․ ոչ կարէ դիւրաւ զերծանիլ 'ի մեղաց։ Զի ցանկութի և հոտ մեղացն կապէ զնա, և քարշէ ոպ̃ շուն տռուամբ․ զի օձ է մեղքն՝ 'ի ծակն շուտ մտանէ․ և ոչ կարէ ոք յետս քարշել զնա զի խորլխն ընդ դէմ է։

ԾԵ Էշ մի անկաւ 'ի գետն, և 'ի խեղդիլն թըքեց․ և գայր թրիքն իվ̃ր ջրոցն․ յառաջեաց քան զէշն։ Եւ ասէ էշն․ այ չար 'ի յորովայնէս դեռ ելեր․ ասա՛ ինձ թէ զլողդ ուր ուսար․ որ քանզիս յառաջ քայլես։ Ցուցանէ։ Թէ կարի անպատշաճ է․ յորժամ տղայք խրատ տան ծերոց․ և տգէտք գիտնականաց։

ԾԶ Զէշն մեծարեցին, և կոչեցին 'ի հարսանիս որդւոյ թագաւորին․ և նա ասէ ոչ փողահարեմ, և ոչ խաղացող․ այլ գիտեմ որ կամ փայտ պիտենայ կրել կամ ջուր՝

զի խմբանն այն է։ Ցուցանէ։ Յոր
ժամ կոչեն զքեզ 'ի բան, կամ 'ի
գործ. որ քեզ անդէպ է՝ և ան
նման. և 'ի վեր քան զկարողութ̃ի
քո. գիտացիր որ քեզ տնազ լինին
արարեալ։

Աշուն աւետիս ետուն, թէ ցնծայ ձէ
և ուրախ լեր. և տուր մեզ օ-
ժիտս, զի թուռն եղաւ քեզ։ Նա
ասէ՝ թէ վա՛յ ինձ, բարեկամ իմ. զի
թէ հարիւր թուռն յայտնի ինձ յե
րանաց իմոց. զծանրութ̃ի բեռանց
իմոց ո՛չ թեթևացուցանէ 'ի թի
կանց իմոց։ Ցուցանէ։ Թէ ա̃մ ոք
ընդ անձին պարտի համարս տալ.
և զբեռն մեղաց իւրոց ինքն բառ
նալ։ Դարձեալ ցուցանէ, մի վստա
հանար յորդիս քո՝ և մի յորդիս որ
դւոց քոց. զի ո՛չ քաւեն զմեղս քո։
այլ դու ջանա՛, քանի որ կարես. և
ապաշխարեա՛ արտասուօք։

Ճանապարհորդ մի հանգեաւ ձը
յաղբեր մի և գնաց. և անդ մո

ռա

ուացաւ հարիւր դեկան. և նոյն ժա
մայն դայ ոմն անցանել զճանապար
հաւն. եառ զգանձն, և գնաց 'ի
լեառն: Իսկ նա յիշեաց զգանձն, և
փութով դարձաւ. և ահա այլ ոմն
դայր զճանապարհաւն. կալաւ զնա,
և եկն 'ի տեղին. և ասէ՝ տուր ըզ
գանձն զոր աստ թողի. զի այլ ոք
ոչ է եկեալ ընդ այս: Իսկ նա երդ
նոյր դառն և ասէր՝ թէ ես չեմ տե
սեալ: Իսկ նա տարաւ զնա 'ի դա
տաւորն արքունի՝ չարչարեալ սպա
նին զնա 'ի նոյն խորհուրդ:

ձթ Պ. այր վաճառական մի, 'ի քաղաք
մի հանդեաւ, և յարեաւ շրջէր
'ի քաղաքն. եկն 'ի վաճառանոցն.
և էհաս նմա պէտք մարմնոյ արտա
քին: Իսկ էր ջրտուն մի մերձ 'ի վա
ճառսն. և նա եմուտ 'ի նմա վճա
րեաց զիւր պէտսն. և գողն գայր
ծածկաբար զհետ նր̃ վն̃ գանձին,
զոր ունէր կապեալ 'ի մէջն: Փու
թով 'ի հետ մտաւ՝ և էհատ զգլուխ
վաճառականին. եառ զգանձն,
և

և գնաց. զի շատ էր աղմուկն և ոչ
իմացաւ ոք: Այն ժամայն մնացորդ
ծըն եմուտ ՚ի ջրտունն ՚ի վճարել
զպէտս մարմնոյն. և զայն տեսեալ
վայ գոչեաց, ընդ անմեղութե̃ իւ
րոյ. և լռեալ մարդիկքն կուտեցին
ի վ̃րն̃ր. տեսին զնա, զի խուլ կայր. և
թաւալէր յարիւնն, զի նոր էր զե
նեալ: Տեսանէին զդանակն արիւ
նաթաթախ. և զձեռս մնացորդին:
սպանաւ և նա. զի ամենեցուն միտք
վկայէր թէ նա էսպան: Այս էր
կուս առակս մի խորհուրդ և մի միտք
ունէին՝ և շատք խաբին. և այլ ընդ
այլոյ համարին զնա: Բայց այս է կա
տարեալ միտքն. զի շատ արդար
մարդիկք դատին և մեռանին անի
րաւ և ընդվայր. և դատաւորն
գիտէ ՚ի միտս իւր՝ և այլք թէ ու
ղիղ դատեցաք՝ զոր Ա̃ծ սիրէ. և չէ
զարմացումն: Ո ի ո՛չ է հրեշտակ
դատաւորն. և ոչ մարգարէ, որ
զխորհն և զծածուկն գիտենայ:
Ապա շատ պարտի քննել դատաւո
րին զբանն և զիրսն. և համբե
րել

րել բազում աւուրս. զի սակաւ սա կաւ յայտնի Ճշմարտութիւն: Նաև միակնի դատաստան չէ պարտ տա նել. զի շատ վնաս լինի անտի. Նա և կաշառօք չէ պարտ Թիւրել զի րաւունս. զի անԹողէլի մեղք է առաջի Տ.Ա:

Դ Լուսինն խաւարի՛ և Թափեալ պակասի լոյսն իւր. և գայ՝ ի դէպ արեգականն. և առնու ՚ի նմանէ կրկին զլոյսն իւր: Յուցանէ: Բանս և օրինակս. Թէ ով մարդ մեղաւոր. խաւարեցաւ լոյս ո̃բ աւազանին որ կայր ՚ի հոգի քո. և պակասեցաւ ՚ի քէն շնորհքն. ՚ի ձրի մի երկ մոլոր Թերահաւատութ̃. այլ յու սայ ՚ի Վ.Ն̃ հաստատուն հաւա տով. և դիմէ առ նա զղջմամբ և արտասուօք. և նա ծագէ ՚ի հոգի քո ՚ի լուսոյ իւրոյ. և սրբէ զանօ րէնութիւնս քո ողորմութեամբն իւրով:

Զմուն

Ձմեռն չորանայ տերև ծառոց. և բոյսք անզարդին. իսկ գարնանային ժամանակն կրկին զարդարին՝ և պայծառանան: Ցուցանէ: Բարի և լուսաւոր օրինակս. ով մարդ եթէ ձմեռն մեղաց եկն ի վ՛ր քո՝ և պաղեցոյց զքեզ. չար հողմն հիւսիսական մեղացն սատանայի, և գոյն տերևացն թափեցաւ 'ի քէն գեղեցկութի՛ քո. և մի անյուսիր ով ողորմելի. այլ երթ սրտի մտօք առ հոգևոր գարունն Ք՛ս՛, որ կոչէ զքեզ քաղցրութբ՛. և նա լուանայ շնորհօքն իւրովք զյանցանս քո. և նորոգէ զքեզ առաջին պայծառութիւնն քո: ղա

Կայ ոզն, և բզէզն, և կան այլ կենդանիք՝ որք աղբակերք են և հոտ ղբ
դարշութե՛ կեանք թուի նոցա: Այս ինչ. զի ցուցանէ օրինակս. թէ ամ՛ մեղաւոր անզեղջ զաղբ և զշարաւ մեղացն ուտէ՝ և պարարանայ. և այն քաղցր է 'ի քիմս նոցա:

Յան

ՂԳ Յանմարդաբնակ լեառն մի կայր
մրջիւն մի մեծագոյն քան զոչ
խար մի. և գայ առիւծն խառնա
կի ընդ նմա. և ծնանի նց զաւակ.
որ է կէս անձինն առիւծ. և կէսն
մրջիմնառիւծ. և յորժամ ծնանի.
դիմէ առ մայրն զի կերիցէ հունդ.
և ոչ կարէ ուտել՝ զի հայրն մսակեր
է. և դիմէ առ հայրն զի կերիցէ
միս՝ և ոչ կարէ ուտել՝ զի մայրն
հնդակեր է. այսպէս երթայ և գայ
առ հայրն և մայրն. և 'ի սովոյն
սատակի: Այ ողորմելի անձն իմ,
որդեակ իմ. քանզի այսպէս ցուցա
նէ առակս. զդասս անզեղջ մե
ղաւորացն. զի ծննդեամբ ոք աւա
զանին են ԱՅ արարչութեն. և ծնա
նի սատանայ մեղօք և անօրէնու
թբ: Դիմեն առ ԱԾ՝ զի հաւատան՝
որ կայ ԱԾ. և գիտեն զի դատա
տան կայ. և ոչ կարեն ուտել զկե
րակուրն ԱՅ՝ զսրբութի և զա
պաշխարութի զգործս բարեաց՝ զի
մեղօք կապեալք են 'ի սատանայէ.
և ոչ կարեն ուրանալ զԱԾ. զի
բնա

բնաւորեալ գխոտէ. որ Ա՛ծ կայ՝ և
յարութի̃, այսպէս են կապեալք
յԱ՛ծ հաւատով. և են կապեալ 'ի
սատանայ չար գործօք. ո՛չ կարեն
առնուլ բաժին 'ի սատանայէ. և
ո՛չ աստուծոյ: Այսպ̃ երթան առ
Ա՛ծ հաւատով. և առ սատանայ
մեղօք, և հեշտասիրութբ̃. և կան
երկմիտ և անհաստատ. և գայ
մահն յանկարծակի՝ և հանէ զնոսա
յաշխարհէս բաժին դժոխոց:

Այր մի հողագործ շինեաց ակա ՂԴ
նաթս բազումս. և էարկ 'ի վերա
տակն իւր վս̃ թռչնոց: Եւ ի գային
կռունկք և սագք. քաղէին զբակ
լայն՝ և զսիսեռն նր̃: առաւօտուն
գնաց տեսանել զակնատսն: Ետես
զի անկեալք էին բազումք 'ի սագից
և 'ի կռնկաց յորոգայթսն. և սկսաւ
մահակօք սպանանել զնս̃: Արա
գիլ մի գտաւ յակնատսն. ասէ լա
լով արագիլն առ հողագործն. վս̃
Ա̃յ մի սպանաներ զիս. զի ո՛չ եմ
ես կռունկն և ո՛չ սագ. և ոչ զսիսեռն

ու

ուտեմ և ոչ զբանկլայ՝ այլ բարեկամ
եմ քեզ. և քաղեմ զամ ժիժմունս
յանդաստանաց քոց: Ասէ հողա
գործն. որով հետև գտայ զքեզ
ընդ թշնամիսն իմ. ընդ դոսա մեռցիս
և սպան զնա: Յուցանէ: Թէ որբա
րեկամ լինի և օգնական. և միաւո
րեալ ընդ չարագործսն. ընդ նոսա
տանջելոց է 'ի հուրն անշէջ. ոպ և
գրեալ է թէ զգողն և զգողակիցն.
զբոզն և զկաւատն, և զկախարդն
միապէս տանջէ Ած 'ի դժոխսն:

ղե Այր մի եհատ զլեզու յորդուն
դրացւոյ իւրոյ գաղտաբար. և
յորժամ եղևեզն գնաց առ թագա
ւորն, և ասէ. թէ իմ է եզն 'ի տղայ
ութէ. և եկեալ մնուցիչ եզինն
մտան իրաւունք: Եւ նա ասէ՝ հոր
թուն լեզուն հատածէր՝ զոր կո
րուսի. բացին զբերան եզին, տե
սին զնշանն. և է առ զեզն. և'ի միւս
օրն լծեաց և սկսաւ վարել. և խըր
տան եզինքն. և նա անկաւ առաջի
խոփոյն և ցցոնեցաւ 'ի վեր նր, ան

ցաւ թափ ընդ թափ. և եղն էառ
զնա. և եկն 'ի դուռն տն իւրոյ.
ընդ առաջելին բազումք և ասէ ին.
գայ սկրամն և բերէ զհարիւրն ։
Ցուցանէ ։ Թէ շատ արդար իրաւ
ունք առնէ ԱԾ. յառաջքան զդա
տաստանն ։ որ իմանան մարդիկք
թէ կայ հատուցումն տմ գործոց ։

Այր մի աղքատ խորովէր միս սա ՂԳ
կաւ յանապատին իւրում. և
արծուն մի յանկարծակի եկն 'ի վե
րուստ՝ էառ զմիսն և վերացաւ ։
Իսկ աղքատն խեւաբարոյ էր՝ անկա
ւիվերայ մորենոյն ձայնեաց ասելով.
թէ մանուկ ես և ունիս կարողու
թի՝ դունիստ և կեր ։ Իսկ ասեն մար
դիկք՝ թէ տարաւ արծուին զմիսն
'ի բոյնն՝ և եդ առաջի ձագուց իւ
րոց, և ինքն գնաց. և կայր կայծ մի
փակած 'ի միսն. այրեաց զբոյնն և
զձագերն արծուոյն ։ Ցուցանէ ։
Շատ արդար իրաւունք առնէ
ԱԾ. զի որ զրկէ զմարդն յանմե
ղուց. նա զմեղքն հետ զրկանացն

'ի յինքն առնու՝ ոպ՟ ասէ առձոմնն:
Նոյն է որ այրէ զնա 'ի հուրն ան
շէջ. ըստ այնմ թէ առնէ Տր՟ երա
ւունս ամ՟ զրկելոց:

ղէ Ժողովեցան թռչունքն և ընտրե
ցին զսիրամարգն վասն գեղեց
կութ՟ն իւրոյ. և արարին իւրեանց
թագաւոր: Պայ աղաւնին, և ասէ.
ով բարի թագաւոր՝ եթէ նեղեն
մեզ արծուիքն՝ և դու զինչ առնես
մեզ զօգնութ՟ի: Ցուցանէ, թէ
թագաւորին, ոչ միայն գեղեցկու
թ՟ի պիտոյ է. այլ քաջութ՟ի և բազ
մահնար իմաստութ՟ի յամ՟ կողմանց:

ղը Էր մեծատուն մի. և ունէր ժա
ռանգ տան իւրոյ զքեռ որդին
իւր. հիւանդացաւ, և կոչեաց զժա
ռանգն զի խրատեսցէ զնա. և նա ե-
կեալ նստաւ՝ էած զգլուխն 'ի ծոց
իւր: Եւ ասէ մեծատունն. ով որ
դեակ, ջանա 'ի բարի. և մի հեշտա
նար 'ի սուտ կեանքս յայս՝ զի ան
ցաւորէ. անմոռաց յիշեա զօրն ա-
հա

հագլին և զժամ՝ մահուն։ դատաս
տանն մի մռայնար. խոնարհ և անո
խակալ լեր. և զմեղս քո մի պահեր
առ քեզ։ Զանձրացաւ յասելն. ասէ
ցնա, թէ որդեակ լսեցեր զոր ասա
ցի քեզ. և կամ՝ ՚ի միտ առեր. և ասէ
ց քեռեին՝ թէ զինչ հրամայեցեր։
Ապա դու լուր՝ ով պատմեմ քեզ
գործ մի զարմանալի. զի ահա ՚ի
փորս իմ կան երակք տասնևերկու,
և ամէնն ՚ի պորտս գայ և երթայ.
և իջեալ միաբանին ՚ի ծածուկ մար
մինս։ Աու ասէ քեռեին. թէ վա՛յ քեզ
ժառանգ անպիտան՝ և հայրենակո
րոյս. զի ես քեզ զօրէնս Ք.Յ. քա
րոզեմ. իսկ դու զերակ պորտոյդ
՚ի թիւ արկանես. յայսմ հետէ եղ
ցես դու ՚ի ժառանգութէ իմմէ։
Ցուցանէ։ Ա. է այսպէս անմտա
ցաք ամ մարդիկք. և ելաք թողաք
զխրատն Ք.Յ. և զպատուանալիսն
դժոխոց. և թողեցաք զհիմս մեր.
որ է գլուխ մեղաց՝ ՚ի ծոցս մեղաւո
րաց՝ աղքատութե թողեալք զե
րակս ՚ի պորտոյս մերոյ զշնութե.

զաբ

զարթեցութի՟. և զայլ մեղաց տե-
սակս: Ո՞ւ զայն խորհեմք անդա-
դար՝ թէ ո՞չ զրկեմք. կամ ո՞չ ար-
բենամք՝ և այլ մեղք գործեմք.
այս են երակք պորտոյս. այս հանէ
զմեզ յԱ՟յ ժառանգութենէն՝ և ո-
ղորմելի առնէ:

ՂԹ Կոյս մի հաւատաւոր կայր ՚ի քա-
ղաք մի. հպարտանայր ՚ի միտս
իւր ՚ի դիւրին զօրութէ՟. ելեալ ՚ի
հրապարակս քաղաքին ձայնէր և
ասէր: Լսեցէք ազգք և ազինք ա՟մ.
զի Ա՟ծ միայն է յերկինս անարատ և
ն՟ը, և ես յերկրի. և այլքդ խոտո-
րեցայք յԱ՟յ: Ու անկաւ ՚ի չնու-
թիւն, իբրև յղացաւ աղջիկն, ել
՚ի բարձրագոյն տեղ մի. գոչեաց
ասելով: Թէ լսեցէք ազգ մարդ-
կան. զի Ա՟ծ միայն մնաց անմեղ և
անարատ. զի ես ՚ի պատն վազեցի,
նայ պատառեցաւ ստորոտս մինչև
՚ի ստինս: Ցուցանէ: Այս է որ հը-
պարտանայ. նայ դևն այսպիսի գոր-
ծէ. թէ տեսանես որ մարդ հպար-
տա

տանայ իվերայ ընկերին, և խօսի
հպարտութ՟բ · և զանձն իւր մ՟բ հա
մարի · յայն դու տես զաւակս զայս։

Ահա երկու սնդուկնոսք երթային Ճ
'ի վաճառ · մինն իմացաւ որ չա
րակնութ՟բ հայեր 'ի նա · վս̅ սա
կաւ գանձուն զոր ունէր · և հատին
նք 'ի վայրենակ տեղի մի՛ և նա երկն
չէր · Իբրև 'ի քուն եղեն յարեաւ
գաղտ յընկերէն · եդ զփայտ 'ի տե
ղին իւր՝ ուր պառկեալ էր · և դդումն
'ի տեղւոջ գլխոյն · և ծածկեաց կար
պետով · և ինքն զատ նստաւ · իմէջ
գիշերի յարեաւ ընկերն՝ և էառ
մեծ լէ մի · և էհար իվ՟ր դդման գի
տէր թէ գլուխն էր · և դդումն կո
տրեցաւ ճայթմամբ ։ Իսկ ձայնեաց
ընկերն՝ և ասէ · թէ ահա սնտիկ
նոս զհաւատքո 'ի դդումն փորձե
ցի · և ինքն փախեաւ 'ի նմանէ ·
Ցուցանէ ։ թէ յամ̅ ժամ Ա՟ծ օգ
նականէ ։ բայց պատրաստ կենալն
աղէկ է · զի Ա՟ծ զիմաստութ՟ին ետ 'ի
սիրտ մարդկան ։ Իսկ դարձեալ յու

ցա

ցանէ զմարդ զոր փորձեալ ես 'ի սա
կաւ իրս. 'ի բան և 'ի գործ վնասա
կար և նենգաւոր. դու զանձն քո
մի վստահանայր 'ի նա:

ձա Եմուտ այր մի առ Թագաւորն՝ և
ետ հարիւր դահեկան, և գնեաց
զա̃մ խեղս՝ որք էին 'ի նոր գաւառ
ին. զի նմա տացեն զհարկն. և իբրև
ել 'ի Թագաւորէն. ետես զայր
մի ձաղատ՝ մի ականի՝ և քթատ՝
խուլ՝ և քարծ՝ ձեռնատ՝ ձուանկ՝ և
մի ոտն կտրած: Դարձաւ առ Թա
գաւորն՝ և ասէ. ո՛վ բարի Թագաւ
որ. զամենայն գաւառիս խեղս աստ
գտի: Հրամայեաց Թագաւորն բե
րել զնա. իբրև ետես զնա զարմա
ցաւ. ասէ փառք Ա. Յ: Ցուցանէ:
Թէ որ ունի նեղութիւն 'ի հոգին,
որ է մեղքն. նա գնեալ է զնա սատա
նայ՝ և իւրն հարկատու արարեալ
խաբէութ̃բ: Իսկ որ բազում մեղս
ունի յանձն իւր. զոխակալութի̃.
զհայհոյութի̃. զշնութի̃. զրկանս,
և զարբեցութի̃. և զայլ մեղս. այս

ինքն

ընկքն, բազում խեղութ̃ին 'ի հոգւին
և ոչ դիմէ առ Ք̅ս̅, և ոչ զղջա
նայ. նա հաստատուն ծառայ է սա
տանայի. և սաստիկ սիրելի քան
զմեղաւորս։

Առիւծն, գայլն, և աղուէսն ճբ
եղեն եղբարք. ելեալ 'ի յորս
գտին երիս ոչխարս։ Եւ 'ի ժամ
ճաշուն ասէ առիւծն ընդ գայլն.
թէ բաժանեա ոչխարդ իմ̅ջ մեր.
կամէր փորձել զգայլն։ Եւ ասէ
գայլն. խոյդ քեզ՝ և մաքին ինձ՝
և գառնս աղուէսուն. և առիւծն
եզարկ թաթովն զկառափն գայ
լուն. որ երկու աչքն կոկոլեցաւ.
նա նստաւ իմ̅ջ նոց։ Եւ ասէ աղուէ
սուն թէ բաժանեա զոչխարսդ իմ̅ջ
մեր. ասէ աղուէսն. ով բարի թա
գաւոր և յաղթօղ. զայս Ա̅ծ է
բաժանեալ. խոյդ քեզ ճաշ. և մա
քիդ հրամէնք. և գառնդ ընթ
րիս։ Ասէ առիւծն. ով գերի ա
ղուէսուկ. ով ուսոյց քեզ զարդար
դատաստանդ՝ զոր արարեր. ասէ
աղու

աղօ̃թեմն՝ թէ գայլուն աչօ̃լին ուսոյց ինձ, որ արտաքս կոկովեցաւ։ Ցուցանէ։ Թէ բազում չարագործք խրատին, և թողուն ըզչարն. յորժամ թագաւորք և իշխանք կախեն և խրատեն զգողսն. և զսպանօղսն։ Այնպէս շատ մեղաւորք զղջանան և երթան ապաշխարութբ̃. յորժամ լսեն մեծատունք պապակին 'ի հուրն. և յեմար կուսանքն լացին անշահ. և'ի հուրն անշէջ առաքեցան։

Ճդ Գայլն եգիտ զէշ մի գէր. կամեցաւ ուտել զնա։ Ասէ էշն ընդ գայլն՝ աղաչեմ զքեզ վս̃ Այ̃. հան զայս խոցս 'ի յիմ ոտնէս՝ և ապա կեր զիս. զի Ա̃ծ ետ 'ի ձեռս քո զիս։ Քանզի բևեռ չար հասաւ 'ի յոտս իմ՝ և տանջէ զիս՝ անցեալ գայլն յետև իշուն՝ զի հանցէ զբևեռն. և յէշն ա̃մ զօրութբ̃ն կից էհար՝ և էզարկ զբերան գայլուն. և կոտրեաց զկզակն։ և ինքն փախեաւ։ Գայլն նստեալ լայր՝ և արտասուէր. թէ

ար

արժանի եմ ես այս չարիս՝ որ եկն իմ անձինս վ՟ն· զի ես մնագործէի· զիս բայտար ո՛վ արար։ Ցուցանէ։ Թէ չարաք լան, և ապաշաւեն որք ձեռն արկեն՝ ՚ի գործ· և յարուեստ ինչ՝ զոր չեն ուսեալ· և չէ իւրեանցն յարմար։

Աղուէսն էառ կաքաւ մի՝ և կամէր ուտել զնա· ասէ կաքաւն, օրհնեալ է Ա՟ծ՝ որ կոչեաց զիս ի քո արքայութիւն· և զերծոյց զիս ՚ի յայս չար ժամանակէս։ Ապա դու աղուէս գոհացիր զԱ՟ծ՝ և ապա կեր զիս· քեզ վարձք է· և աղուէսն կկզեցաւ՝ բացեալ զբերանն հայեցաւ յերկինս՝ և ասէ։ Գոհանամ զքէն Ա՟ծ, որ պատրաստեցեր մեզ զսեղան բարութե՟· կաքաւն զերծաւ ՚ի բերանոյն, և թռեաւ, և ասէ կաքաւն՝ առաջ ուտել պիտի և ապա գոհանալ զԱ՟ծ։ Ցուցանէ։ Թէ զխոստացեալ իրքն մի համարիր քեզ· զի շատք աւեն՝ և ոչ տանեն· մարդոյ շնորհակալ մի լի- ՃԴ

նիր

նիր․ մինչև չառնուս զիրսն․ և թէ ջուր տան դու 'ի ժամն 'ի գոգդ առ։

ՃԵ Աղուէսն զչխտն 'ի բերան էառ՝ և կամէր ուտել զնա․ ասէ չխտն ընդ աղուէսուն շատ աղաղ թէ ու տես զիս․ զի ժամ է ինձ որ ածէի մարգարիտ մի քան 'ի ջաղամու ձու՝ որ է ահագին։ Եւ թէ թողուս զիս ես ածեմ զմարգարիտն, և լինի քեզ․ և ապա կեր զիս․ երդնում, որ գամ 'ի կամս քո։ Երբև եթող զնա թը ռեաւ, և նստաւ 'ի բարձրագոյն ծիւղ մի։ Ասէ աղուէսն․ արա զոր ասացեր, և եկ 'ի կամս իմ։ Ասէ չխտն ընդ աղուէսն․ ապա քեզ նման անմիտ լինիմ թէ այլ գամ 'ի կամս քո։ Եւ դու ընդէ՞ր հաւատա ցեր․ թէ ես կարի սակաւ մարմնովս այնչափ մեծ մարգարիտ կարէի բերել քեզ։ Այլ լուր տամ քեզ խրատ՝ որ շատ օգուտ լինի քեզ։ անդէպ բա նից մի հաւատար։ ընդ խախուտ որ մով մի ննջեր․ 'ի շնացող ծերէ․ և 'ի հպարտ աղքատէ․ և 'ի ստախօս

թա

Թագաւորէ, և յառաջնորդէ ի-
բաց փախիր։ Ասէ աղուէսն. ահա
որ դատեսցէ զքեզ Ա՛ծ՝ զի ստեցեր
ինձ։ Ասէ չիտն. սուտ կայ որ վարձք
է առել. ՚ի մեղաց և ՚ի մահուանէ
և յորոգայթէ ապրիլ. կամ զմարդ-
փրկել. շատ վարձք տայ նմա Ա՛ծ։
Ասէ աղուէսն՝ թէ ընդէր է գրեալ
մարգարէն դաւիթ. թէ կորու-
սանէ Տ՛ր զայնոսիկ՝ որք խօսին
սուտ։ Ասէ չիտն. թէ ժամանակն
գիտէ՝ և պատճառն. քանզի յոր
ժամ սուտ խօսիս ՚ի մեղաց և ՚ի վշտաց
փրկիս. և փրկես զմարդն. նա Ա՛ծ
ուրախանայ. և թէ սուտ խօսիս,
և զմարդ գայթագղեցուցանես նա
մեծ չար է։ Ապա դաւիթ խաղաց
՚ի յափսթեր և շորեթափեցաւ. և
կարծիս եւ թէ մաղաս կաթեցայ՝
կամ դիւահար, և փրկեցաւ ՚ի մա
հուանէ։

Արէց մի աարի, իմաստուն և բա Ճղ
րի՝ և այր մի հայ կուռէլին ընդ-
երեարս վն հաշուոյ ինչ։ Ասէ այրն,
թէ

թէ այն քարն ՚ի քո երեսդ. և ՚ի քո երեսունևերկու ատամունսդ. և երէցն զարմացաւ՝ գնաց շուտ մի ՚ի տունն՝ ասէ ընդ երէցկինն իւր. թէ աւաղ՝ վա՜յ. Առ զմոմն և տես թէ քանի են ատամունքս իմ։ Եւ կինն թուեաց՝ և ասէ. երեսունևերկու են ստուգապէս։ Եւ նա գայ առ այն մարդն՝ և ասէ. ուստի գիտացեր զթիւ ատամանց իմոց. կամ ով ասաց քեզ։ և նա ասէ, տէր, յիմ ատամանցս գիտեմ զքոյդ՝ ասացի։ Առակս այս յորժամ կամենաս մարդոյ կարեկից լինիլ. թէ յիմս մարմնոյս գիտեմ և զձերդ։ Որդեակ իմ զի հասարակաց է պատերազմ, սատանայի նախանձն միապէս կորուսանէ զմեզ՝ և տանի ՚ի դժոխս. և առնէ որդի գեհեննին։

ՃԷ Առիւծն հիւանդացաւ՝ և ուղարկեաց բժշկաց խնդիր. Թերևս արասցեն դեղ ցաւոյն։ Եւ եկեալ բժշկապետացն. և ասեն ընդ առիւծն. Թէ քո ցաւոյդ այլ դեղ չկայ

չկայ. քան որ զիշուն ականջսն կըտ-
րեն, և զսիրտն հանեն, և տան որ
ուտես, և աղեկնաս: Ասէ առիւծն
ընդ աղուեսն. եթէ կարես էշ մի
գտանել՝ և բերել: Ու ասէ աղու-
եսն. խիստ շուտով կատարեմ ըզ-
հրամանս քո: Քանզի ունիմ ինձ
եղբայր՝ էշ մի. և է խիստ սաստիկ
գէր. և է յայս անուն հովիտս, և
արածի: Ու գնաց աղուեսն առ
էշն, և ասէ. ո՛ բարի և հեզ էշ.
այժմ գիտացիր, զի մեծ փառաց
կամիմ հասուցանել զքեզ: Քան
զի առիւծն որ է թագաւոր գա-
զանաց հիւանդացեալ է՝ և մօտ 'ի
մահ է. և ուզէ որ տեսանէ ըզ-
քեզ. և զթագաւորութիւն 'ի քեզ
տայ: Ու հաւատաց էշն խաբողա-
կան բանիցն. և եկն առ առիւծն.
և'ի համբուրել զառիւծն. ա-
ռիւծն զբերանն էբաց՝ և կամէր
խեղդել զէշն. և իշուն փրծեալ
փախեաւ: Ու հասեալ աղուեսն
իշուն՝ և ասէ. ո՛ անմիտ՝ ընդէր փա-
խեար: և ասէ՝ եթէ 'ի համբուրելն

կըս

կսկծեցոյց զնա։ և ասէ աղուէսն.
եթէ այն 'ի սատակ սիրոյն էր։
Դարձիր, և մի փախչիր և եկն էշն
առ առիւծն՝ և աղուէսն կալեալ
զփողք իշուն. հանեալ զսիրտ իշուն
և զականջն կտրեալ կերաւ։ Եւ ասէ
թէ դեղ է՝ նայ լաւ է ինձ, քան ա
ռիւծուն։ Եւ գնաց աղուէսն առ
բժշկապետսն, և առ առիւծն՝ և
ասէ. եթէ եկէք զարմացէք, և հիաց
մանն իրք տեսէք, զի այն էշն ոչ ականջ
ունէր և ոչ սիրտ։ Եւ եկեալ տեսին
և ասէ աղուէսն ցբժիշկն. եթէ ինչ
էր զարմանայք եթէ սիրտ և ականջ
չունի. թէ դա սիրտ և ականջ էր ու
նեցել. զի երբ յառաջն առ առիւծն
եկն և զմռնչոյն լսել էր. նայ կրկնա
նի չէր դարձեալ։ Եւ արդարացու
ցին զբանն աղուէսուն։ Այս մեզ՝
զի ականջ ունիմք՝ և ոչ լսեմք զպատա
նալիս դժոխոցն. և սիրտ ունիմք,
և ոչ իմանամք զխաբէութեն սատա
նայի։ Ի՞նչ մարդ՝ որ զմեղսն թողու
և այլուէ յայն մեղքն դառնայ. նա
մեռանի 'ի ձեռն սատանայի՝ ոպ մե

ռաւէ

ռաւ էջն 'ի ձեռն տուխծուն. ա-
ուխծն և աղուէսն են սատանայ.
և էջն անդարձ մեղաւորն. որ ոչ
դառնայ 'ի մեղաց:

Եկեալ բժշկապետ մի 'ի քաղաք Ճր
մի. ձայնէր, և ասէր ընդ մար-
դիկք թէ խիստ բժիշկ եմ. և ամ̃
ցաւոց դեղ ունիմ. և զհիւանդն ողջ
առնեմ: Եւ այր մի կամէր ծաղրա-
նել զհաքիմն. և առեալ իշու ագի
մի. և պահեաց զնա ընդ հանդեր
ձովն. և ասէ ընդ հաքիմն. ով իմաս
տուն բժիշկ. գայլն խածեալ է
զիմ իշուկն. կարես զիմ իշուն դեղ
առնել՝ որ ողջանայ: Եւ ասէ հա
քիմն խիստ քաջ. գնա՛ բեր դեկան
մի որ տամ սև մհամի և սպիտակ որ
ողջանայ. և այրն զիշու ագին եցոյց՝
և ասէ. այսօր կարես դեղ առնել.
և նա ասէ՝ ո՞վ այր այդոր Ոչ կարէ
դեղ առնել՝ որ սատեղծ իշ է. ես զի
արդ կարեմ իշուն ագին. որ է նշան
իշուն. զէշ առնել: Այս մեզ՝ զի
նշան է միացեալ 'ի մեզ քրիստո
նէ

նէութՙն ոՙչ այն իշուն ագին. ա-
նուամբ միայն եմք քրիստոնեայք՝
և ոչ գործովք։ Ասէ հաւատք ա-
ռանց գործոց մեռեալ են. և հաւա-
տ առանց գործոց դատարկ է։
Մարմին առանց հոգւոյ մեռեալ է
նոյնպէս և հաւատ առանց գործոց։

ՃԹ Այր ոմն գնաց 'ի հողվարքն. և
երեք գանձ էառ մարդոյ. եդ
'ի սկուտեղն և գնայր ը̅ փողոցն 'ի
ներքս. և ձայնէր, և ասէր. ով գնէ
գանձ։ Իսկ ծաղր առնէին զնա.
և ասէին թէ խև է. և տեսեալ զնա
վաճառական մի, և ասէ. բեր ըզ
գանձդ տեսանեմ։ Իսկ առեալ վա
ճառականն. և հանեալ զմախաթն
և հարոյց 'ի յականջն՝ և ոչ եմուտ
և ընկէց զնա։ և ածեալ ընդ ա-
կանջ երկրորդին. և միւս ականջն
թափանցիկ անցաւ. և յերրորդին
ածեալ՝ և ամենևին ոչ ելանէր յա
կանջէն մախաթն։ Իսկ զերրորդ
գանձն խիստ սիրեաց վաճառա
կանն. և զերկուսն արհամարհեաց։

և ետ բազում ոսկիս՝ և գնեաց զմէկ
գանձն զայն, որ մախաթն կպաւ,
և ոչ ելանէր. և բազում բժշկու-
թի առնէր գանձն ՚ի հիւանդս և
յախտաժետս. Եւ մեկնեաց վա-
ճառականն՝ և ասէ. եթէ այս որ
մախաթս չմտաւ. նա այս նոքա են
որք ամենևին Ա. Ճ բանքն յիւրեանց
ականջն և լսելիս չէ մտեալ՝ և ո՛չ բա-
րիս գործեալ։ Այն որ Ք͞ն ասաց.
որ անկաւ ապառաժին, և ՚ի չգոյէ
հիւթոյ չորացաւ. և այն որ ընդ-
մի ականջն մտաւ մախաթն. և ընդ-
մէկ այլ դեհն ՚ի դուրս ելաւ. նայ
այս այն մարդիկքն են՝ որ ա͞ծային
բանն ընդ մէկ ականջն մտեալ է՝ և
ընդ մէկայլն ելեալ. որ անկաւ և
հեղձաւ՝ և եղև անպտուղ։ Եւ այն
որ մնաւ՝ և ո՛չ ել. այն մարդիկքն
են, որք ա͞ծային բանքն յիւրեանց
լսելիքն են մտեալ՝ և այլ ո՛չ ելեալ.
այն որ անկաւ յերկիր բարի, և ետ
զպտուղ և գործեաց զարդարու-
թի͞ն. երեսուն, վաթսուն, և հա
րիւր։ Ո ի թէպէտ և մեռեալք

են նոքա . ապա կենդանիք են . և փոխեալք 'ի մահուանէ 'ի կեանս՝ և 'ի խաւարէ 'ի լոյս ։

ՃԺ Առիւծ մի 'ի քար այր մի մտաւ և ասաց ամ̃ կենդանիք 'ի յինքն 'ի տես գան . և զարջն դռնապան եդ 'ի դուռն քարայրին . գազանք և էրէք որք մտանէին առ առիւծն որ սուտ հիւանդացեալ էր նա զամէնն ուտէր . և այլ ոչ ելանէին . եկն խոզն . քանզի բնութ̃ 'ի վայր հայեցող է . կանգնեցաւ 'ի դրանն . և ոչ մտանէր ։ Ասէ դռնապանն , մուտ 'ի ներս . և ասէ ո՛չ մտանեմ, ք̃զի որ մտեալ է՝ այլ չէ ելեալ . ահա երևի հետն ։ Ապա էհար դռնապանն զխոզն . և խոզն բարկացեալ զբաշն լարեաց՝ և էզարկ զարջն . և ընդ երկուս կէս արար՝ և մեռաւ . և ամօթալից արար ։ Ցուցանէ ։ Այս քարայրն դժոխքն է . և առիւծն սատանայ է . և արջն խուր զօրքն է ։ Ապա մեղաւոր՝ որ անդարձ է մեռեալ . և 'ի դժոխքն է անկեալ այլ ո՛չ կարէ

ազա

ազատիլ։ Եւ խոզն որ դարձաւ և
ոչ մտաւ. նա այն մեղաւորն է՛ որ
զմեղսն եթող՝ և դարձաւ՝ և ոչ
մտաւ 'ի դժոխքն. որպէս խոզն այն
ոչ մտաւ 'ի քար այրն։ Ապաշխա
րեաց մեղաւորն և ելաց. և այլ ոչ
գործեաց մեղս. և ամօթ արար
զսատանայ. որպէս արար խոզն զարջն։

Այր ոմն հազար խոզ էած 'ի մի ՃԺա
տեղի՝ և զպարիսպ էած շուրջ.
և իշխք կորեկ և գարի բերէին, և
բոտէին զխոզսն։ Նա իշխանքն 'ի
բանէն երբ գային. և քուռակնին
երթային մօտ 'ի խոզերն՝ թէ ուտեն
'ի կորեկէն. կամ 'ի գարւոյն. և
պահապանքն ոչ թողուին. այլ 'ի
կառափն հարկանէին։ Եւ յորժամ
իշխանքն գային՝ նաքուռակնին գան
կատէին մօրերուն, և ասէին. թէ
խոզերուն անխնայ կուտան, թէ կե
րէք. և մեք սովամահ կու լինիմք։
Եւ ասեն իշխանքն է. քուռակնին.
թէ համբերեցէք. այն խոզերն որ
կուտեն՝ նա պիտի որ վճարեն զմեզն՝
զինչ

զինչ կերեւալեն։ Եւ անցեն աւուրք
ինչ. եւ ահա եկն Թագաւորն՝ նըր
տաւ իվերայ պարտպեն. եւ հրամայ
եաց՝ որ զամէն խոզերն կապեն՝ եւ
ընդ մէջ կտրեն։ Եւ սկսան կա
պել եւ կտրել ընդ մէջ։ Եւ սկսան
խոզքն բողոք հարկանել՝ եւ ձիչ բառ
նալ. եւ ձչէին առաւել քան զայլ
կենդանիս. եւ ասեն քուռակնին ընդ
իշոհանին. Թէ այն ինչ ձայն է.
եւ ասեն՝ թէ կու վճարուին 'ի խոզե
րոյն զոր կերել են. եւ տեսեալ քուռ
կնոյն զտանջանս խոզիցն՝ դողային։
Եւ կանչեցին, եւ անկին յոտս իշոցն եւ
ասեն՝ թէ վն Այ տեսէք. թէ գարէ
հատիկ ձղակմիջերս է կպեալ. կամ
կորեկ հատ 'ի կռնակիս. եւ ասեն մայ
րերն ընդ քուռակնին. Թէ մի վա
խէք՝ ով կերեալ է նոյ այն վճարէ.
դուք մի հոգայք։ Զուցանէ. Որ
խոզքն մարմնասէր մարդիկքն են,
եւ փափկասէրք. եւ անզեղջ եւ ան
դարձ մեղաւորքն, եւ իշխանքն։ եւ
քուռակնին աղքատքն, Եւ այն որ
ծեծէին. եւ ոչ տային թոյլ ուտե
լոյ

լոյ. որ և մեղաւորն հարկանէ զաղ
քատն՝ և ոչ առնէ ողորմութի. և
ընդ անձն ասէ՝ թէ կեր, և խմէ՝ որ
չհիւանդանաս: Եւ թագաւորն
Քս է՝ որ և յաւուր դատաստանին
ասէ վասն մեղաւորացն. թէ կորե
ցէք ընդ մէջ՝ և հանէք 'ի խաւարն
արտաքին. ուր լալ աչացն է, և կր
ճել ատամանցն:

Է սպիտակ հաւ մի 'ի թագաւո ճժբ
րաց տունն: և յորժամ մարդն
հիւանդանայ. նա բերեն զհաւն
մօտ 'ի հիւանդն: Թէ ունիցի հիւ
անդն դարձ որ առողջանայ. նա
հաւն քաղցրութբ հայի 'ի հիւ
անդն, և գիրկ արկանէ, և զհով հա
րու թևոցն: Ապա թէ մահու լինի
հաւն խոժոր հայի, և դարձուցա
նէ զերեսն 'ի հիւանդէն, և փախ
չի. և այն հաւոյն կարեն գիտել
մարդիկք զմեռանելն և զապրելն:
Ցուցանէ: Հաւն Քս օրինակ է՝ և
հիւանդն մեղաւորին. արարիչն
Քս հայի 'ի մեղաւորն. ոչ հայի
հաւն

հաւն 'ի հիւանդն, եթէ կամք ունի
որ դառնայ և զղջանայ. նայ Ա՟ծ
քաղցրութ՟բ 'ի մեղաւորն հայի.
և գիրկ արկանէ, և համբուրէ.
զի ո՛չ կամի զմահ մեղաւորին՝ այլ
զդառնալն 'ի չար ճանապարհէն:
Ապա թէ չունենայ կամք մեղա-
ւորն դառնալ 'ի մեղաց. նա Ա՟ծ դար
ձուցանէ զերեսն 'ի մեղաւորէն:
Որպէս ասէ մարգարէն, դարձու
ցից զերեսս իմ՟ 'ի նոցանէ՝ և ցու
ցից նոցա:

ճժգ Այր ոմն մեծատուն ունէր բա
զում կաղապար ոսկի և արծաթ,
և տարեալ թաղեաց զինքն 'ի գե
տին: Եւ ծառայքն տեսին զտեղին
ուր թաղեաց. և 'ի գիշերի գաղտ
հանին, առին և փախեան. և իմա
ցեալ այրն որ չկայր ոսկին և ար
ծաթն: Եւ սկսաւ լալ՝ փետել զմօ
րուսն՝ և վայ տայր անձինն. և նեղա
սրտեցա՝ և կամէր չուան առնուլ
և կախիլ: Եւ տեսեալ այր մի ի-
մաստուն, ասէ. ընդէր խեղդիս:
Եւ

Եւ ասէ ծառայքն իմ զոսկին և զար
ծաթն իմ գողացան, և փախեան։
Եւ ասէ իմաստունն. որչափ էր ոս
կին։ և սալիքար կայր. և ցուցանէր
թէ այսչափ էր՝ և այնչափ էր։ Եւ
առեալ իմաստունն զքարն և զսալն
թաղեաց ՚ի տեղւոջն ուր ոսկին էր.
և ասէ իմաստունն, ահա ոսկին քո
աստ. քանզի անպէտ էր քեզ իբրև
զքարս զայս։ Եւ բանիւս այսուիկ
իմաստունն մխիթարեաց զայրն. և
թափեաց, որ ո՛չ խեղդեցաւ։ Ցու
ցանէ։ ամ̃ մարդ որ զոսկին և զար
ծաթն սիրէ. նայ զերդ զայն այրն է
որ ո՛չ հոգւոյն եղև՝ և ո՛չ մարմնոյն։
Եւ փոխանակ շահոյն կամէր խեղ
դիլ. և անձնաշահ լինիլ. զարծաթ
սիրութ̃ի ասէ արմատ է ամ̃ չարեաց։

Է ծառ մի ՚ի հնդկաց աշխարհն. և ճժդ
ունի պտուղ գեղեցիկ և քաղցր.
և է տերևալից. և ունի շուք գեղե
ցիկ։ Եւ է ՚ի սահմանս նր̃ իժ օձ
բազում. եթէ օձն ՚ի մարդկանէ
ոք ՚ի ծառին տակն գտանէ, չխայ
թէ

թէ. ապա թէ 'ի զատ գտանէ 'ի ծա
ռէն խայթէ: Ցուցանէ: Նշան
Ե.ծ, և պտուղն և շուքն պատուէ
րանն Ե.Ժ. և օձն սատանայ. եթէ
զոք գտանէ 'ի դուրս 'ի պատուէ
րանէն Ե.Ժ. նա խայթէ ոչ օձն այն:

ճժե Եւ ահա ժողովեցան 'ի մի տեղ՝
տասն վաճառականք. և գնա
ցին ընդ ճանապարհ մի. և մտին
յերկիր մի օտար՝ և յերկիրն այն էր
սով. և իժ, և օձ. և նեղութիւն. և
վաճառականքն տարակուսեցան:
Եւ անկաւ յետոյ նոցա հրեղէն պա
րիսպ. և ոչ կարէին յետս դառ
նալ. և առեալ նեղ ճանապարհ մի
երթային՝ թերևս գտանիցեն զքա
ղաք՝ զի վաճառեսցեն. և գնացին
ամ մի մեծաւ աշխատանօք՝ և ոչ
գտին զշէն. և լալով՝ և ողբալով
կոծէին զանձինս իւրեանց: Եւ ահա
բուսաւ նոցա թև մի արծուոյ. և նոքա
ջանացին, և զթև մի այլ շինեցին:
Եւ հինգն 'ի նոցանէ կորեան. և
հինգն թռեան, և վերացան. և տե
սին

սին գաւառ մի լուսեղէն։ Եւ թա
գաւոր քաղաքին առաքեաց առ նա
զօրականս՝ և ասէ. բարի եկիք՝ ահա
քաղաքս առաջի ձեր. յոր տեղ կա
միք դուք ՚ի հոն հանգիք։ Եւ համ
բուրեաց թագաւորն զվաճառա
կանսն. և գովեաց՝ և ասէ. վաշ է
ձեզ՝ որ ընդ նեղ ճանապարհն ե
կիք։ Եւ մտեալ ՚ի քաղաքն գտին
զվաճառականսն՝ զորս ՚ի բազում
ժամանակս ցանկային զի տեսանի
ցեն։ Եւ գտին զգինձս՝ և զդիպակս
և զկումաշն՝ զոր կամէին գնել. և
ուրախացան մեծաւ ուրախութե՟։
Ցուցանէ։ Օ ի տասն վաճառա
կանք ադամ է և իւր ծնունդքն. և
այն որ օտար երկիր՝ և յիժանոց. և
՚ի սով՝ որ և արտաքսեցաք յանմահա
կան դրախտէն. և անկաք յայս աշ
խարհս՝ ուր կայ իժ և օձ. որ է սա
տանայ՝ և ՚ի նեղութե՟ կամք հոգւով
և մարմնով։ Եւ այն որ թև արծուէի
բուսաւ, այն հաւատն է. որ Ա՟ծ
յերկնից յերկիր իջաւ՝ և հաւատս
ետ մարդկան։ Եւ այն որ ջանացին
և

եւ թէ մի եւս ինքեանք շինեցին այնքանք
են. որք ջանացին, և բարի գործեցին.
մէկ թէ հաւատքն. մէկ բարեգոր
ծութիւն: Իսկ այն հինգն որք կորեան.
այն նոքա են, որ մեղս գործեցին,
և կորեան 'ի ձեռն սատանայի. որք
են դասք ձախակողմանցն. որք կո
չին յիմարք կուսանք: Իսկ այնք որք
թուեան, նոքա են՝ որք լացին, և
ողբացին. զանձինս իւրեանց չար
չարեցին վ̃ն արքայութ̃են, որք են
դասք աջակողմանցն. որք կոչին իմաս
տունք կուսանք: Իսկ այն լուսեղէն
դաւառն երկնից արքայութիւն է.
քաղաքն անդրանկաց վերինն եդեմ:
Թագաւորն Ք̃ս է՝ և զօրականք
հրեշտակքն. որ և Ք̃ս բազում
հրեշտակս առաքէ՝ յորժամ մեռա
նի արդարն. և դովեն զարդարսն,
որք զերկրաւոր կեանս արհամար
հեցին: Իսկ համբուրէ Ք̃ս զար
դարսն և ասէ՝ վայ է ձեզ. ընդ որ
նեղ ճանապարհն եկիք. ոչ̃ ինքն
ասաց. նեղ է ճանապարհն, և ան
ձուկ է դուռն, որ տանի 'ի կեանսն

յաւ

յաւիտենից. և սակաւք են, որք
գտանեն զնա։ Նեղ ճանապարհ
զչարչարանսն ասէ։ և որ նեղութեց
համբերէ. և այն որ գտանէ բե
հեզս՝ ծիրանիս՝ և զդիպակս՝ և
զակունս. որ է բարեգործութին,
պահքն, սէրն, համբերութին,
և այլ բազումն։ Նոյն այն, զի գտին
զվաճառականսն. զորս 'ի բազում
ժամանակս ցանկային տեսանել.
որ և արդարքն որչափ էին յայս
կեանքս, նա ցանկային զի տեսա
նիցեն զմարգարէսն, և զառա
քեալսն, և զհայրապետսն. և զմար
տիրոսսն. որ և գտին զարդարսն՝ զորս
ցանկային տեսանել։ Տասն վաճա
ռականք. զտասն կուսանսն ասէ։
Նոյն այն որ հինգն կորեան այն զյի
մար կուսանսն ասէ։ Նոյն այն որ
հինգն ապրեցան, և թուեան. զի
մաստուն կուսանսն ասէ՝ որք թը
ւեան արդարութբ։

Այր քաղաք մի. և կայր բազում ճանապարհ, որ երթայր 'ի քա ղաքն ՃԺԳ

ղաքն յայն։ Բազում մարդիկ գնա-
ցին. և մին մարդն արգիլեցաւ՝ և
զսօլերաց փոկերն կապէր. և այլ
ոչ հասաւ. և դուռն քաղաքին փա-
կեցաւ՝ և ոչ կարաց մտանել։ Ցու-
ցանէ։ Թէ փոքր առաքինութիւն է՝
և թէ մեծ տանի զմարդն յարքայու-
թիւն. որպէս զճանապարհն այն, որ
զմեծ և զփոքրն տանէր 'ի քաղաքն։
Նոյն որ ընդ աշխարհիս զբաղանօն
զբաղի՝ ի մէջ մեղաց շաղախի. նա
ոչ կարէ հասանել արդարոցն. և
մտանել 'ի քաղաքն անդրանկաց.
որպէս այրն այն, որ ընդ սօլերումն եղև
և ոչ եհաս ընկերացն. և ոչ մտաւ
'ի քաղաքն. քանզի փակեցաւ դուռն։
Նոյնպէս փակի դուռն ողորմութեան
անողորմիցն, և անդարձ մեղաւո-
րացն յաւուրն դատաստանին. որպէս
փակեցաւ յիմար կուսանացն։

ճժե Մկներն ասացին ընդ իրեարս. Թէ
այդ էր է որ մեք ոչ սլեհ ունիմք
և ոչ եղջիւր. և կատուն զմեզ դիւ-
րաւ կալնու։ Նոյն մկունքն սրեցին
փայտ

փայտ, և կապեցին 'ի գլխնին.
որ թէ կատուն գայ նա մէջ կուռ-
ինք. որ ոչ առնու զմեզ. և ահա
եկն կատուն, և մկունքն փախեան,
և ընդ ծակն 'ի ներս մտին. և այնք
որք զփայտն եղջիւր էին կապել.
ոչ կարացին մտանել ընդ ծակն.
այլ կատուն կալաւ և էկեր: Յու-
ցանէ: Մուկն որ եղջիւր կա-
պեաց, այն մարդիկքն են որք պղծ-
նին և ծարուրվլին. և սպիտակա-
ցուցանեն զերեսս. և ապականին
գեղեցիկ. և այն զոր Ած է ստեղ-
ծել ոչ հաւանին. այլ իւրեանքն
այլ գեղեցկանան. և որոգայթին
'ի ձեռն սատանայի. ոպ որոգայթե-
ցաւ մուկն 'ի ձեռն կատուին:

Օձն յորժամ ելանէ 'ի ծակէն, ճժը
և երթայ ընդ որ և կամի. նայ
հինգ. ծուռ առնու՝ հինգ տեղ ծռի
ինքն՝ և ապա կարէ գնալ: Իւ յոր
ժամ գայ 'ի ծակն դուռն ըղորդի
և ապա կարէ մտանել 'ի ծակն՝ յիւր
հանգստարանն: Յուցանէ: Որ
մարդն

մարդն՝ հինգ զգայարանս ունի։
աչքն. ականջն. բերանն. ձեռքն.
ոտքն. Նա մարդ յորժամ գնայ 'ի
մեղս զհինգ զգայարանսն ծռէ։
Աչօքն չար հայի. ականջօքն չար
լսէ. բերանովն չար խօսի. ձեռօքն
անօրէնութիւն գործէ. ոտօքն 'ի
չար ճանապարհ գնայ։ Իսկ յոր
ժամ մարդն գայ եկեղեցւոյ դուռն
յաղօթել. նա պարտէ զհինգ ըզ
գայարանսն ըղորդել. և ի չարէն
կտրել. և ապա յեկեղեցին մտա
նել և աղօթել. որ է մայր մեր։ և
հանգստարան. և ապա Աստուծոյ ընդու
նելի լինի աղօթքն։ Որպէս օձն այն,
թէ չղորդէ զհինգ ծուռն. նա
ոչ կարէ մտանել 'ի ծակն և 'ի հան
գստարանն. նոյնպէս մարդն թէ
ոչ կտրէ զհինգ զգայարանսն 'ի
չարսովորութենէն, նա ոչ մտանէ
յարքայութիւն Աստուծոյ։ Ոչ է պարտ
մարդոյն այնմիկ՝ որ յեկեղեցի Աստուծոյ
մտանէ։

Օձն երթայ 'ի դուր դաշտ. և ճժթ
'ի կանաչ և 'ի ծաղկանց մէջ.
և կանգնի ելլ՟ տըտանն, և իմանայ
թէ հոտն յոր դիհաց գայ. և դէմ
հովոյն կանգնի. և հոտն ծաղկանց
հոտն է՟ ինքն զարկնէ. և պարարտա
նայ 'ի հոտոյն: Իսկ ծաղիկ մի կայ՝
յորժամ այն ծաղկին հոտն ընդ-
ինքն դիպի. նա լուսատու մարգա
րիտ մի 'ի գլուխն յօրինի. և գիշերին
ընդ որ երթայ օձն այն լոյս է իւրն.
և լուսաւորէ մարգարիտն զօձն.
և ցերեկն մութն: Ցուցանէ: Թէ
դաշտ կանաչ եկեղեցի Քի՟ է. և
ծաղիկն պատուիրանն Քի՟ է, առա
քելական և մարգարէականն: Իսկ
այն մեծ ծաղիկն՝ որ գեղեցիկ է, և
զլուսատու մարգարիտ շնորհէ.
այն աւետարանն Քի՟ է. և հոտն
Հոգին ս՟բ: Աթէ ոք իմաստութբ՟
երթայ յեկեղեցի Քի՟. և հաւատով
մտիկ դնէ Քի՟ բանիցն. նա Հո
գին ս՟բ անուշահոտութբ՟ արբու
ցանէ զլսօղս: Իսկ եթէ զաւետա
րանական բանն, հաւատով և սրտի
մտօք

մտօք առնու 'ի միտ. նա լուսատու մարգարիտ լինի անգին. և զհոգւոյն խաւարն, որ է մեղքն, հալածէ. և զաշխարհիս կեանքն որ է սուտ լոյս՝ մութն երևեցուցանէ ։

ձի Գող մի ձմերուկ մի գողացաւ 'ի պարտիզէն, և կամէր կտրել։ Խօսեցաւ ձմերուկն և ասէ. մի կտրեր զիս. զի 'ի միջի իմ խարասցի էշ կայ՝ կաց մինչ որ ածեմ և ապա կտրէ։ Եւ հաւատաց այրն՝ և տարել 'ի տունն եդ 'ի պատուհանն. և եկաց անդ մինչև պատլեցաւ՝ և պլթխեցաւ՝ և ելաւ նեխութին արտաքս. և ազատեցաւ 'ի գերութէ։ Ցուցանէ։ Յորժամ մարդն ընկնի պարտէ աւել զինքն թագաւորի որդի եմ, կամ մեծատան. որ չսպանանեն, այլ պահեն. մի թէ գան գանձ տան և գնեն։ Եւ ծառայն կամ մահով խալսի. կամ փախչի, և ազատի։

Էր ծառ մի բարձր յոյժ. և տե Ճիա
րևք նր̃ մեղր կաթեցուցանէին.
և այր մի ելեալ 'ի նմա լիզէր զտե
րև նր̃։ Եւ մկունք երկու հատանէ
ին զծառն. և կայր առաջի ծառոյն
գուբ մի սոսկալի, և ահագին վի
շապ մի 'ի նմա։ Եւ այրն այն ոչ երկն
չէր՝ և ոչ դադարէր 'ի լիզելոյ զտե
րևն։ Ցուցանէ առակս. Թէ ծառն
ժամանակս է. և մեղր 'ի նմա մեղքն
է, և հեշտութի̃. զոր գործեմք
լիզելով։ Եւ երկու մկունքն տիւն է
և գիշերն. որք հատանեն զժամա
նակս մարդոյն։ Եւ գուբն գերեզ
մանն է. և վիշապն մահն է։ Ա՛յ
մեզ՝ զի հեշտացեալ եմք յայսցանէ,
որք կան առաջի մեր։

Էր այր մի՝ որ ունէր կին մի բար Ճիբ
կացող՝ և անզգամ, և լեզուա
նի. որ հանապազ անհանգստէր՝
և տանջէր՝ զայրն իւր։ Եւ յա
ւուր միում 'ի միտ էած զբանն
սաղոմոնի թէ լաւ է յանապատի
բնակիլ քան ընդ կնոջ անզգամի

լեզուանւոյ և բարկացողի։ Եւ
ասէ 'ի կինն. այ կին տուր ինձ պա
րան զի երթայց 'ի լեառն՝ և բերից
տանս փայտ վառելոյ։ զայս ասաց
և երթայր 'ի լեառն զի անդ բնա
կի։ Եւ կինն աղաչատեաց և գարշ
մնաց. և այրն լալով գնաց 'ի լեառն։
Եւ իբրև գնաց 'ի շուրջ, եգիտ անդ
'ի լեառն դաստարկ ջրհոր մի։ Եւ
ասէ 'ի միտս իւր. երթայց, բերից
զկինն իմ աստ՝ 'ի ջրհորս իջուցից՝
և թողից աստ։ Եւ գնաց առ կինն,
և ասաց. այ կին, ես քեզ բան մի ա
սեմ, և դու զայն մարդոյ մի ասեր.
և ասէ կինն ինչ։ Եւ նա ասէ, գնա
ցի 'ի լեառն՝ և գտի անդ դաստարկ
ջրհոր մի. և իջի անդ, և տեսի կա
նացի զարդ ոսկեղէն և արծաթե
ղէն։ Ա՛պրջան՝ մատանի՝ խալխալայ
վզնոց՝ ձրամպիտ և այլ զարդս կա
նացի։ Եւ ասէ կին ուրախութբ,
երթամք՝ հանեմք զայն և բերեմք 'ի
տունս՝ որ մարդ չիմանայ՝ և ոչ տե
սանէ։ Եւ ելեալ գնացին այրն և
կինն 'ի բերան հորոյն։ և ասէ, դու

բունէ

բուռնէ զպարանն, զի դու ոչ գի
տես զինչ առնես։ Նա կինն ասէ,
թէ ես իջանեմ։ Նա այրն կալաւ
զպարանն, և իջոյց զկին 'ի հորն. և
բերեալ մի սայլ քար եդ ի վ̄ր հորոյ
բերնին, և գնաց։ Նա կաց աւուրս
բազում։ Նա ասէ՝ երթայց, և տե
սից զկին իմ, թէ զինչ եղև. և յոր
ժամ եկն 'ի ջրհորն՝ ետես 'ի բե
րան հորոյն զդև մի՝ զի կայր անդ.
Նա ասէ դևն, ով մարդ՝ Ի՞նչ համար
աստի տար զայրն 'ի յետ՝ որ ես եղա
նեմ. և քեզ շատ բարութի̄ առ
նեմ։ Ասաց այրն զինչ։ ասէ դևն,
կին մի եկն աստ՝ անկաւ 'ի ջրհորս.
և անարգէր՝ և հայհոյէր զայր մի։
Նա ես ասացի, թէ քանի քաշանք
տաս. մէկ պահ դադար տուր. և
նա եթող զայր իւր՝ և վիճեցաւ
ընդ իս։ Նա փախուցեալ զիս ազա
տէ. և ասէ այրն, զինչ խոստանաս
ինձ. և նա ասէ՝ երթամ, և մտա
նեմ 'ի դուստր թագաւորին, որ
քեզ տան։ Յայնժամ այրն այներ
դուռն եդ դևին. և ծերբեաց
զայրն

զայլն եւ ել դեւն: Եւ ասաց դեւն,
յորժամ գաս եւ առնուս զդուստր
Թագաւորին. ես երթամ, մտանեմ
յայլ Թագաւորի դուստր. եւ դու
անդ մի գար թէ չէ յայնժամնէ ե-
լեալ 'ի քեզ մտանեմ: Եւ ել դեւն,
եւ գնացեալ եմուտ 'ի դուստր Թա
գաւորին. եւ աղաղակէր, եւ ասէր
'ի բերանոյ աղջկանն. թէ զիս այս
ինչ մարդոյ տուք որ ելանեմ: Եւ
յորժամ տարան զայրն զայն, եւ ել
դեւն. եւ գնացեալ եմուտ յայլ Թա
գաւորի դուստր՝ եւ լլկէր զնա չա
րաչար: Եւ Թագաւորն լուաւ թէ
փեսայ Թագաւորին բժշկութ̃ն
առնէ, եւ զդեւս հալածէ. յուղար
կեաց Թագաւորին բազում կլայ
էթ եւ արմաղան. թէ յուղարկէ
զքո փեսայն՝ որ գայ իմ դուստրն
բժշկէ: Յայնժամ աղաչեաց Թա
գաւորն զփեսայն իւր թէ գնայ.
եւ նա ելեալ գնաց: Եւ յորժամ
գնաց առ Թագաւորին դուստրն:
Ասաց դեւն, ես քեզ ոչ ասացի
թէ աստ մի գար. եւ դու ընդէր
եկիր.

եկեր։ Յայնժամ փեսայ Թագաւորին ասէ։ Ես եկի զի քեզ իմաց արարից. զի այն կինն եղեալ է 'ի հօրոյն. և զքեզ կարի խիստ կուզէ։ Ասէ թէ ուր է. և նա ասէ թէ աստ եկեալ է 'ի դուրս դարպասին։ Նա ասէ դէն, Ամիրուն համար զնա 'ի դուռն արգելէ. մեկ պահ՝ որ ես երթամ, 'ի վեր փախչիմ. և քեզ շատ բարութի առնեմ։ Նա այնպիսի բանիւ բժշկեաց զգուսար Թագաւորին. և Թագաւորն ետ նմա բազում գանձս և առեալ գնաց։ Յուցանէ։ առակս Մարդ հետ լեզուանի կնոջ՝ անզգամի, և բարկացողի ո՛չ եղանէ 'ի հուն։ Ո ի սաղոմոն հրամայէ. թէ լաւ է անապատի բնակիլ քան ընդ կնոջ անզգամի, լեզուանւոյ և բարկացողի։

Ճիգ

Այր մի բարի. զատեալ ամ̃ չարեաց. և երթային ճանապարհորդք և վաճառականք բազումք յաշխարհէ յաշխարհ. և այս բարի

րի այրս ի մէջ ն՟ց։ Եւ գնացին ՚ի տե
ղի մի՝ որ ասէին թէ, երեք աւուր
ճանապարհք այլ ջուր չկայ։ Մ՝էկ
ջրհոր կայ. և անտի ընդ այն այլ
երեք աւուր ճանապարհ այլ ջուր
ոչ կայ։ Եւ յայն ջրհորն բնակեալ
կային երկու դևք։ Եւ զինչ մարդ
որ անդ մտանէր այլ ո՛չ ելանէր. և
գնաց կարաւանն անդ. և ջուր զոր
ունէին հատեալ էր։ Յայնժամ
փաաց կարաւ՟անն. ով առնու զիւր
արծան գինն՝ և մտանէ ՚ի ջրհորս,
և ջուր տայ ամենեցուն։ Ո՛ է ով
մտանէր, և ջուր տայր ամենեցուն.
՚ի յետոյն որ զինքն ի վեր քարշէին.
դևն կտրէր զպարանն՝ և զմարդն ՚ի
ջրհորն կորուսանէր։ Եւ ասէ բա
րի մարդն, թէ ինձ տուք զարծան
գինն, որ մտանեմ ՚ի հորն, և ջուր
տամ ամենեցուն։ Եւ առեալ զա
րծան գինն, և եմուտ ՚ի ջրհորն՝ և
տայր ջուր ամենեցուն հաւասար։
Եւ յորժամ զինքն կապեցին, դևն
էհատ զպարանն. և տարեալ ըզ
մարդն ՚ի մաղաղայն որ կայր ՚ի ջր
հորն

հորն. և զի դևն այն էր այլակերպ և դժնիկ սևադեմ։ Եւ ասէ 'ի մարդն այն, թէ հաւանիս ինձ, և ասէ մարդն այն, փառք Տ͞ն որ ըզ քեզ ստեղծեր է, և յօրիներ զայդ քո կերպարանդ. զայդ լոյս երեսդ. զայդ ծովաչերդ. և սկսաւ գովել զա͞մ տեղիք ն͞ր մի ըստ միոջէ։ Եւ էր անդ ժահահոտ գորտ մի. և ասէ դևն ընդ այրն, թէ գորտն ինչ ազգ է։ Եւ էր գորտն այն յոյժ աղտեղի. և այրն սկսաւ գովել զնա մի ըստ միոջէ զա͞մ տեղիս գորտոյն այնորիկ։ Եւ յայնժամ ել դևն և գորտն մտին յայլ ներսի մաղաղայն. և փոխեցան յայլ կերպարան լուսափայլ. և եկին առ այրն, և ասեն հիմի ինչ եմք. զի մինն 'ի կուրի՛ կերպարանեալ էր. և միւսն յաղջիկ։ Եւ ասաց այրն այն, ես գիտեի դուք հանց գեղեցիկք էք նա՛ ես այն որ համր զձեզ յառաջ գովեցի։ Եւ յայնժամ առեալ զնա դևն եմուտ 'ի ներսի մաղաղայն. և եցոյց նմա զմաղաղայն, յոր զմարդիկն

ասպա

սպանեալ էր. և ասէ 'ի յայրն՝ փոքր
ամենեքեան ինձ ոչ հաւանեցան՝
վասն այնորիկ սպանի։ Եւ դու ինձ
հաւանեցար, առ քեզ որչափ և կա
րես գանձ և մարգարիտ. և ակունս,
ոսկի և արծաթ՝ և գնա խաղաղութ͞բ։
զի դևն ունէր մաղաղայն։ Եւ ասէ
այրն թէ չեմ կարեր տանիլ զի հորս
խոր է՝ և ընկերք իմ գնացին։ Յայն
ժամ առեալ դևն զմաշեայ տոպ
րակ մի, և ելից զնա ոսկւով և արծա
թով՝ և ականքք պատուականօք.
և առեալ զինքն և զտոպրակն գան
ձովն՝ և եդ 'ի հորուն բերանն, և
ասաց դնալ։ Եւ գնացեալ է հաս կա
րուանին։ Եւ նոքա տեսին, և զար
մացան, թէ որպէս ազատեցաւ 'ի
դևէն։ Յուցանէ առակս։ Բա
րի, և խոնարհ մարդոյն Ած օգնա
կան է, և դևն ոչ կարէ չար առ
նել նմա։ Ոի ասէ սողոմոն թէ
արդարն յորսողաց փրծանի. և փո
խանակ նր մատնի ամբարիշտն, և
ինքեանք անկցին։

Իմաս

Իմաստուն աւագ երէց մի կայր 'ի Ճիդ
քաղաքի մի․ կամեցաւ զորդին իւր
քահանայ առնել։ Իսկ ժողովե
ցան բազում քահանայք և եպիս
կոպոսք․ և յորժամ յօրհնել սկսան
զնորընծայն․ յայնժամ 'ի տեսիլ
տարան զնորընծայն։ Որ էր բարձր
սանդուխ մի, և սանդխտին գլուխն
էր զարմանալի դարպաս մի․ և էր
անդ բազմեալ լուսափայլ թա
գաւոր մի․ և համարս առնէր քա
հանայից։ Իսկ բերին զծեր քահա
նայն 'ի սանդխտին տակն․ և բերին
զինչ կերեալ էր 'ի ժողովրդենէն․
և կապեցին 'ի մի տեղ․ և բարձին
ծեր քահանային, թէ առ և ել 'ի
վեր՝ և համար տուր թագաւորին․
Իսկ նա ոչ կարէր՝ զի բեռն ծանր
էր և սանդուխն բարձր․ և հրեշ
տակք հրեղէն մախաթով մխէին
զնա յետևանց․ և նա ոչ կարէր։
Յայնժամ մինն 'ի լուսաւոր ա
րանցն ասէ՝ թողէք զծերդ, զի զոր
ինչ առեալ է որդւոյն է կերցու
ցեր։ Իսկ յայնժամ բերին զնորըն
ծայն

ծայն, և բարձին զբեռն նր̃ իվր̃
նր̃. և նա ոչ կարէր հանել 'ի վեր.
և զհամարն տալ: Իսկ հրեշտակքն
կարի խիստ մխէին զնա յետևանց.
և խիստ ցաւեցոյց զնորընծայն, և
'ի ցաւուն զարթեաւ, և փախեաւ. և
ոչ եղև քահանայ: Յայժամ ասաց
եպիսկոպոսն. թէ քեզ զինչ պա
տահեցաւ՝ որ չլինիս քահանայ:
Ասաց նորընծայն՝ թէ այն որ ինձ
պատահեցաւ՝ թէ քեզ էր պատա
հեալ. յառաջ դուն պիտի փախ
չէիր յեպիսկոպոսութէ̃: Ցուցա
նէ առակս: Ով ուտէ այն
վճարէ. և զինչ մարդ որ ուտէ և
ոչ վճարէ, ինքնին տալոց է հա
մարն առաջի թագաւորին յոր
ժամ գայցէ:

ՃԻԷ Էր իմաստուն ճարտարապետ
մի. և ուսուցանէր զա̃մ զի
մաստութ̃ն իւր՝ զոր գիտէր աշա
կերտին: Իսկ երիս բանս ոչ ուսու
ցանէր: վս̃ այն զի կարի իմաստուն
էր աշակերտն իւր. և յորժամ
ու

ուսանէր այլ ոչ կենար ՚ի մօտն. զի
յոյժ սիրէր իմաստասէրն զաշա
կերտն վասն խոնարհութեան: Եւ
ասէր նմա որդեակ, կաց առ իս
մինչև վերջին աւուրն իմ. և զայն
երեք բան խրատն ուսուցանեմ
քեզ՝ և գնա՛ խաղաղութեամբ, և
այլ ոչինչ պակասի քեզ: Եւ նա
եկաց առ նմա մինչև յօր մահու
անն: Եւ յորժամ հիւանդացաւ,
և գիտաց զվախճանն իւր. յայն
ժամ ասաց ցաշակերտն իւր՝ էկ
ասեմ. երեք խրատն: Եւ ասէ ցնա
մէկ զքո աղէկ օրդ վաստի մի տար:
երկու յետնուց ՚ի վեր ճանապարհ
մի գնար. երեք զինչ աչօքդ տես
նուս զայն մարդոյ մի ասեր: Մե
ռաւ, և թաղեաց զնա. և ել գնաց
՚ի քաղաք մի: Եւ ետես անդ գեղե
ցիկ դուռն մի բարձր. և յառաջ
ոտն աւելեաց զդուռն, և ջուր
ցանեաց, և գնաց: երկու օրն զայն
արար. և երեք օրն աշկեցան, և
ըմբռնեալ տարան զնա առ դրան
տէրն: Եւ ասէ պարոնն, ուստի

ես

ես, և նա զիրաւն ասաց. և ետես
պարոնն զողայն, զի կարի գեղե
ցիկ էր, և իմաստուն: և ասէ ցնա:
որդեակ՝ մեր Թագաւորին որդի
չունի. և դու կամիս՝ և տարայց
զքեզ՝ զի եղիցիս որդեգիր, և ժա
ռանգ աթոռոյն: Եւ ասէ, դու
գիտես տէր իմ: Եւ առեալ զնա առ
Թագաւորն տարաւ, և առ Թագու
հին. և արարին իւրեանց յորդի.
և եղև որդի Թագաւորին: Եւ յաւ
ուր միում ել Թագաւորն յորս է
րէոց. և ունէր Թագաւորն զմա
տանի մի, որ յաջողութե՟ ալխամ
իվերայ ականն գրեալ էր. և զայն
մոռացեալ Թագաւորն 'ի ներքև
բարձին: Ասաց յորդեգրին իւր.
Թէ 'ի ներքև բարձին մոռացայ
զմատանին. գնա՛ և բեր զմատանին
յաջողութե՟: Եւ նա ել յերիվար,
և գնաց զմատանին առնուլ. և
ետես զմէկ նայիպն յանկողին Թա
գաւորին. և նա էառ զմատանին,
և գնաց. և ոչ ումեք յայտնեաց ըզ
բանն: Յայնժամ խորհուրդ արա
րին

րին Նայիպն և Թագուհին․ զի յոր
ժամ գայցէ Թագաւորն սպանա
նել տան զորդի Թագաւորին։ Եւ
՚ի գալ Թագաւորին գնաց Թա
գուհին ընդ առաջ․ և ՚ի զուր մատ
նեաց զանմեղ մանուկն․ Թէ յոր
ժամ եկն ՚ի գիշերի տանել զմա
տանին, և դատապարտեաց զնա․
ոչ կինն պետաբրէի զյօսէփ։ և
Թագաւորն յամաչելոյն ոչ սպան
զմանուկն։ Այլ ուղարկեաց զնա
այլում Թագաւորի որ ընդ իշխա
նութբ էր եղեալ իւրն։ և գրեաց
առնա գիր այսպէս։ Եթէ յորժամ
գայ Թղթիս բերողն առ ձեզ․ զգ
գլուխն կտրեցէք, և յիս ուղարկե
ցէք։ Եւ մատնահարեցին զԹուղթն
արքունական մատանեաւն․ և ե
տուն յորդէգիր Թագաւորին․ և
առեալ գնաց։ Եւ գրեալ կայր իմէջ
Թղթին․ եթէ ասէ, որդի եմ Թա
գաւորին, կամ Նայիպն, կամ հաւա
տարն իմ, մի լսէքնոցա՝ հատէքզգ
գլուխն։ Եւ առեալ զԹուղթն
գնաց։ և յորժամ յետինքն մօտ ե
ղև

զև ՚ի գեօղ մի․ յինչեաց զբանն իմաս
տասիրին թէ յետնուց ՚ի Ճանա
պարհ մի գնար․ յայժամ զտապլ
պաղնէզարկ՝ և ելայն նայիպն զոր
եռես յանկողին թագաւորին․ եկն
առաջ և առեալ տարաւ ՚ի տունն
իւր, և ասաց․ հանգիր, կեր, արբ
և ուրախլեր․ և տուր թուղթդ յիս
որ տանիմ առ թագաւորն․ և քեզ
խաբար բերեմ։ և նա ետ զթուղթն։
և առեալ գնաց։ Եւ հատին զնորա
գլուխն, յորժամ կարդացին ըզ
թուղթն․ և ետուն յայլ ումն մարդ՝
որ ունէր, և բերէր ՚ի գիւղն․ և
զայն էառ որդի թագաւորին տա
րեալ ետ ՚ի հայրն։ Եւ տեսեալ զայն
զարմացաւ թագաւորն․ և գիտաց
զբանն՝ որ յՐ.Ճ էր յաջողեալ։ Եւ
ասէ որդեակ զինչ գործեալ է քո։
զի քեզ էր որոգայթս պատրաս
տեալ․ ՚ի քո որոգայթն նա անկաւ։
Եւ ասաց՝ թէ դաւիթ ասէ․ թա
քուցին ինձ զորոգայթ․ և անկան ին
քեանք ՚ինոյն։ Յուցանէ առակս։
Թէ մարդ մարդոյ չար առնէ․ և

յորժամ որոգայթ ձգէ՝ և որսայ.
նա ինքն պիտի անկանի յորոգայթն.
և չար մարդն պիտի գայ չարի. ոչ̃
ասէ դաւիթ: Փորեցին առաջի
իմ խորխորատ՝ և անկան ինքեանք
'ի նոյն: Նաև ասէ, բարի արա, և չար
չի մնար: Ոպ̃ ասէ սաղոմոն. Թէ
արդարն յորսողաց փրծանի. և փո
խանակ նր̃ մատնի ամբարիշտն: Նաև
թէ ոք մարդոյ ամօթն ծածկէ.
նա Ա̃ծ իւրն պիտի ծածկէ՝ ոչ̃ որ
դի թագաւորին. բազում բարու
թն̃ տէր արար Ա̃ծ: Նաև հրամայէ
աւետարանն մի դատէք, և ոչ դատի
ցիք. մի պատժէք, և ոչ պատժի
ցիք. և այլն:

Էր պատանի մի աղօթարար՝ որ Ճիզ
զամ̃ աղօթս իւր ատենին կատա
րէր. և այլ բազում աղօթս առան
ձին կատարէր, և մատուցանէր
Ա̃ծ: Նաև սատանայ կամեցաւ զմա
նուկն զայն 'ի փորձանս ձգել. և
յարոյց զկախարդ մի, որ ասաց 'ի
պատանին, թէ եկ 'ի տուն իմ և զոր
ինչ

ինչ խնդրես յինէն, տաց քեզ։ Եւ
նա գնաց անմեղութ̅ զհետ կախար-
դին։ Եւ կախարդն տարեալ զնա՛ 'ի
տուն իւր՝ և փակեաց զդուռն իւր.
և եմոյծ զնա այլ ներսագոյն տուն.
և ասաց ցպատանին՝ դու կացիր
աստ՝ մինչև ես եկից՝ և նա եկաց անդ։
Եւ կախարդն ելեալ գնաց՝ և յու-
շացաւ մինչև ցերեկոյ. իսկ պատա-
նին աղօթելոյ ո՛չ դադարէր։ Եւ յոր
ժամ եկն կախարդն, և գիշերի ոտն
խաղաղեալ էր։ և եբեր երկու ձի.
և ասաց՝ 'ի մէկն դու հեծիր. և 'ի
մէկն ես։ Եւ հեծան, և գնացին. և պա-
տանին ո՛չ գիտէր թէ ուր տանէր
զինքն։ Եւ գնացին անհուն դաշտ
մի. և դաշտն լի էր եթէօպացւովք
Եւ կայր իմէջ դաշտին սեաւ բլուր
մի, և իվ̃ր սեաւ բլրին չարտախ մի՝
'ի սեաւ չրտախին կայր սեաւ թախտ
մի. և իվերայ սեաւ թախտին կայր
սեաւ թագաւոր մի բազմեալ։ Եւ
գնաց կախարդն առ սեաւ թագաւ-
որն. և ասաց՝ այն սեաւ թագաւորն
ցկախարդն։ Ու է իմ չարագատ

մշակ՝ այսօր ինչ ես արարեալ՝ և կամ
ինչ ես վաստակեալ։ Եւ ասէ կա
խարդն. թէ զայս պատանիս բերի՝
որ երկիրպագանէ քեզ։ Եւ թա
գաւորն ասաց ընդ պատանին. ո՞վ
պատանի. թէ երկրպագես ինձ,
զքեզ հազարապետ կացեմ զօ
րաց իմոց։ Յայնժամ աղօթքն ՚ի
միտն անկաւ՝ զի մօտէր առաւօտն։
Յայնժամ ասաց պատանին, թէ
ես սովորեմ այսմ ժամու երկիրպա
գանել Ք͞ի՝ որ խաչեցաւ վ͞ս մեր՝
և ազատեաց զհոգիս մեր ՚ի դժո
խոց՝ և ՚ի ձեռաց սատանայի։ Եւ ան
կեալ երկիրպագ ը͞ն արևելս՝ և օրհ
նեաց զԱ͞ծ։ Յայնժամ եղև ձայն թ
մբուկք, որոտմունք ահագինք. և պա
տանին յուշաթափեալ անդ. և յոր
ժամ յուշաբերեալ՝ եւ ելեր՝ և զոչ
ոք ետես բայց զինքն ի մէջ անհուն
դաշտին. և հրեշտակն եկեալ եցոյց
զճանա͞պրհն՝ և գնաց ՚ի շէնն. և պատ
մեաց զեղեալ գործն։ Յայնժամ
լուեալ թագաւորն. և տարաւ զպա
տանին առ ինքն՝ և ասէ։ Ո՛վ բարի

պատանի, ես յերուսաղէմ պիտի
գնամ, եկ տանիմ զքեզ ընդ իս՝ որ
երկիրպագանես Քնի, և սրբ գե
րեզմանին. և ամ տնօրինական տե
ղեացն Քնի Այ մերոյ: Նա գնա
ցեալ Թադէոսն՝ էառ զպատանին
'ի հետ. և յորժամ երկիրպագեաց
Քնի և սրբ տնօրինականացն. և յոր
ժամ գնացին երկիրպագանել ինքն
և Թադէոսն. Քնի պատկերն խօ
սեցաւ, և ասաց. ով պատանի 'ի
միւս անգամ գալստեան իմոյ քեզ
բիւր հազարաց Տր առնեմ. փո
խանակ այնորիկ՝ որ առաջի զօրացն
դիւաց ինձ երկիրպագեցեր ան
ահ. և զիս Այ դաւանեցեր և
հաւատացեր: Ցուցանէ առակս:
Թէ Այ զաղօթասէրն յամ չարեաց
փրկէ և յամ փորձանաց դիւաց.
և յայն կեանքն փոխարէն հատու
ցանէ: Ով հրամայէ աւետարանն
Քնի. թէ ընդ միոյ երեսուն. և
ընդ միոյ վաթսուն. և ընդ միոյ հա
րիւր. որ ունիցի ականջս լսելոյ.
լուիցէ:

Աղուէսն և արծուին եղեն եղ ճիէ
բարք. և միաբանութիւն արարին,
և զերդումն և դաշինս եդին. որ
զորսն 'ի մի տեղ բերեն և ուտեն.
Եւ յորժամ աղուէսն որսայր՝ գնայր
արծուին և 'ի մէկ տեղ ուտէին.
Եւ յորժամ որսայր արծուին առ
նոյր զորսն, և երթայր նստէր 'ի
բարձր վէմն. և աղուէսն ոչ կա
րէր ելանել անդ: Եւ գիտաց ա-
ղուէսն զնենգութիւն արծուոյն. և
ասէ՝ ով եղբայր, նենգաւոր և ա-
գահ երևիս, և աւազակ: Ցուցա
նէ առակս: Թէ մարդ հետ ընկե
րոջ ծուռ լինի. նման է գողոց և
աւազակաց. և յուդայի. և մար
դասպանի:

Այր մի ցանեալ էր յընկզի ծառի ճիը
տակն պարտէզ մի ձմերուկ՝ և 'ի
ժամ պտղոյն եկն ետես ձմերուկն
մեծամեծ. և հայեցաւ 'ի ծառն՝
ետես զընկուզն մանրագոյն. և ա-
սաց: Տր Ած, զամ զորինչ ստեղ
ծեր՝ 'ի կարգի է և նմանաւոր. բայց
այս

այս երկու պտուղս անդէպ է և
աննման։ Նաև այրն պատկեալ կայր
'ի ծառին տակն՝ և 'ի վերհայէր.
և հրամանաւն Ա.Ծ ոստեաւ ընկ-
կուզ մի 'ի ծառէն. և կարի խիստ դի-
պաւ 'ի ճակատն, և պատառեցաւ՝
և եղ արիւն։ Նաև այրն ելեալ աղաղա-
կէր առ Ա.Ծ, և ասէր. Տր Ա.Ծ, զամ
զոր ինչ ստեղծեր 'ի կարգի է և
նմանաւոր. և ով ոք քոյ ստեղծուա-
ծոյն բան ասէ. նա ճակատն քան
զիմս պիտի լինի. և թէ ձմերուկ
էր ընկուզն՝ զիս պիտի սպանանէր։
Օ ի այրն ասաց. թէ ձմերուկն պի-
տէր ընկուզի տեղն. և ընկուզն 'ի
ձմերուկի թուփն։ Յուցանէ
առակս։ Թէ ամ մարդ ասէ՝ զամ
զոր արար Ա.Ծ բարի է՝ և ամենևին
նմանաւոր. և մարդն ոչ պիտի որ
Ա.Ծ ստեղծուածոյն բան ասէ՝ և
ոչ հաւանի. և ոչ ասէ, խոտան է և
գէշ. վայ ինձ վայ։

ՃԻԹ Այր մի զիւր ժամանակն 'ի մեղս
էր. և աղգի աղգի չարեօք լը-
ցեալ

ցեալ. և բնաւ ո՛չ հիւանդացաւ։
Եւ յաւուր միում գնաց ննջեաց ը̅
հովանեաւ եկեղեցւոյ միոյ՝ և եկն
'ի զղջումն՝ և երեւեալ սկսաւ եկեղե
ցի շինել։ Եւ յորժամ կատարեաց
զեկեղեցին, հիւանդացաւ զցաւ
մահուն. և ասաց այրն Տ̃ր Ա̃Ծ, այս
քանի ժամանակէր իմէջ մեղաց էի,
և իմէջ չարեաց՝ և ո՛չ հիւանդա
ցայ. և յորժամ զեկեղեցի շինե
ցի՝ հիւանդացայ՝ և մեռանիմ. մի
թէ՞ եկեղեցի շինելն անընդունելի
է։ Եւ 'ի նոյն ժամն երեւեալ պահա
պան հրեշտակն ասաց։ Թէ մի հա
կառակ լինիր. Ա̃Ծ քեզ ողորմե
ցաւ. և քո զեկեղեցի շինելն քան
զա̃մ գործ լաւ համարեցաւ։ Ցու
ցանէ առակս։ Մի զղջանայ, և'ի
մեղաց դառնայ. Ա̃Ծ զմեղսն նր̃
ոչ յիշէ. և Ա̃Ծ կամի. որ մարդն
բարի գործէ՝ և ապա մեռանի. զի
իւրն արժանի լինիցի. զի Ա̃Ծ ողոր
մած է։

ՃԼ Եկեղեցին պարծեցաւ 'ի նմա նոր՝
և ասաց թէ եմ տաճար և տուն
Ա.Յ: Առ յիս գան քահանայք և ժո
ղովուրդք, և աղօթեն. և մատու
ցանեն զպատարագ՝ և հաշտի Ա.Ծ
ընդ աշխարհի՝ և մեղաց թողութի
լինի: Յայնժամ գայ Ջաղացն, և
ասէ ցեկեղեցին. թէ զինչ ասես
ճշմարիտ և արդար է. բայց դու
զիմ երախտիքն մի մոռանար. որ
գիշեր և ցերեկ աշխատիմ, և դա
տիմ, որ ուտեն քահանայք և ժողո
վուրդք՝ և ապա գան առ քեզ աղօ
թեն, և երկիր պագանեն Ա.Յ:
Յուցանէ առակս: Թէ կան աշ
խարհի մարդիկք, որք հանապազ
դատին, և աշխատին ոչ մեղու.
թագաւորք, և իշխանք, և քահա
նայք, և ժողովուրդք, և ապա
մարդիկք ուտեն զվաստակս, և
ապա երթան յեկեղեցին, և յիշեն
զԱ.Ծ, և օրհնեն:

ՃԼԱ Էշն և ձին խօսեցան ը̃ միմեանս.
և ասաց ձին ընդ էշն. թէ դու

ով

նո՛վ ես։ և կամ զինչ պէտք ես։ Ես
ձի եմ՝ որ թագաւորք՝ և իշխանք՝
և պարոնայք կազմեն զիս ոսկի զար-
դով՝ և բազմին իվ̅ր իմ։ Եւ ասաց
եզն թէ ամէն աշխարհի պարծանք
ես եմ՝ որ վաստակեմ, և չարչարիմ.
և խոնջիմ. և ապա դու և թագաւ-
որդ և ամ̅ ժողովուրդն ուտէք ըզ-
վաստակն իմ. եթէ իմ վաստակն
ոչ լինի. դու և քո թագաւորն
մէկ հետ մեռանիք. և դու երախ
տամոռաց ես լինիս։ Ցուցանէ ա-
ռակս։ Թէ մարդ կայ՝ որ աշխատի
քան զեզն. և կայ մարդ որ համա
պաղ ձի հեծնու, աւերածէ աշ
խարհի. և թէ աշխատաւորն ոչ
աշխատի ոչ̅ եզն. նա մեռանի ինքն
և հեծնօղն։

Անասուն մի բեռնակիր բարձեալ ՃԼԲ
ունէր յինքն մէկ հակն մահա
դեղ. և մէկն աուսեր սպանման. և
գնացեալ դէմ էառ ՚ի նեղ տեղաց
մի ՚ի ճանապարհին, և ոչ կարէր ան
ցանել։ Եւ յորժամ նեղեաց զինքն,

՚ի

'ի մէկ դիհէն սուսերն խոցեց՝ և մէկ դիհէն մահադեղն հեղաւ՝ և սպան զնա ։ Ցուցանէ առակս ։ Թէ բեռնակիր մարդս․ որ պիտի բարին բառնայ հանապազ 'ի յողն իւր․ և մարդն յիմարեալ է 'ի ձեռն սատանայի․ և փոխանակ բարւոյն մեղք բարձեալ 'ի յողն իւր՝ որպէս սուր և մահադեղ նմա ։

ՃԼԳ Խլուրդն բնութ̃ի ունի՝ որ հանապազ զբոյնն ոչ գտանէ՝ և ըզգետնի հողն իւր տայ՝ և 'ի մէկ տեղ ոչ դադարի ։ Նաեւ թէ ինքն գէշ հոտ ունի, և ինքն իւր հոտոյն տեղեաց 'ի տեղի փոխի․ զի գիտէ թէ հոտն 'ի տեղեացն է՝ աստ և անդ հողն 'ի վեր տայ․ և գէշ հոտն յինքն է ։ Ցուցանէ առակս ։ Թէ կան մարդիկք յաշխարհի՝ որ միշտ և հանապազ տեղեաց 'ի տեղի փոխին՝ զի անհանգիստ են․ և գիշահոտ յան հանգստութ̃էն ։ Պարզեալ ցուցանէ․ որ բնութ̃ի բարի է գործքն չար մարդոյ․ նմա անդէպ թուի և

և ատէ զնա մահուչափ՝ և անհան
գիստ պահէ իւր զչարն ո՛չ խայտ
առակի։

Կենդանի մի կայ 'ի ծովն խիստ ճլդ
անոխակալ և անվնաս. և խոտ
արածի՝ և մէկ եղջիւր կայ 'ի ճա
կատն. և ծայրն 'ի վայր է. և խաչա
նման եղջերովն երթայ զծովն խառ
նէ՝ և ջուրն քաղցրանայ. և ըմպե
ինքն, և զինչ՝ որ անդ կենդանիք
նմա հայլին, որ երթայ 'ի ծովն և
խառնէ զջուրն՝ զի ինքեանք ըմպես
ցեն։ Յուցանէ առակս։ Թէ ա̃մ
մարդ չարութիւն ոչ ունի յ՚.Ղ̃՝ ո̃պ
այն կենդանին. և բարի մարդիք
վարդապետք են, և ճգնաւորք. և
ընտրեալք մարդիկք են, որք չունին
զչարութիւն. և նք̃ կարողեն. զդառն
քաղցրացուցանել՝ զչարն 'ի բարի
դարձուցանել։

Իշուն բնութիւն և սահման է. որ 'ի ճլե
դժուարին տեղ ընկնի կամ շա
ղախի. այլ այն տեղովն չի գնար՝
իմէջ

իմէջ կենդանեաց և անասնոցն քան
զէշն յիմար ո՛չ կայ. և արապն ի-
շուն յիմար ասէ. և մարդ մարդոյ
ասէ քան զէշ յիմարես: Յուցանէ
առակս: Օ մարդն որ փորձեալես
մէկ հեղ: նա այն է զոր տեսեալես.
և մարդն իմ՟ իւր բանին հարկաւոր
պիտի կենայ. և զայն բանն որ փոր
ձեալ է մէկ հեղ նա այլ անձն ոչ
առնու. և թէ առնու նա քան զէշն
յիմար է՝ և այլ ան գէտ է:

ՃԼԶ Էր այր մի՝ և ունէր կին մի անզգամ.
օր մի լուաւ յիմաստնոց՝ թէ աղէ
կութի արա՛ 'ի ծովն ձգէ՝ և վատի
մի հնար. և այրն սովորութի և սահ
մանք արար իւրն. որ ամէն օր մէկ
հաց տանէր և ձգէր 'ի ծովն. և
մէկ ծովային գայր և առնոյր ըզ
հացն՝ և տանէր թագաւորին. զայս
աւուր միում ասաց ծովայինաց
թագաւորն. թէ զայն մարդն բե
րէք՝ որ զհացն 'ի ծովն արկանէ.
որ ես զիւր աղէկն առնեմ. և
այն ծովայինն զհացն տանէր թա
գա

դաւորին. եկն յայն տեղին որ ըզ-
հացն 'ի ծովն ձգեր։ Եւ յորժամ
եարկ 'ի ծովն՝ ձայնեաց թէ մի
գնար։ Աներ թագաւորն ասաց թէ
յիս բերէք զայն մարդն՝ որ զիւրն
աղէկ առնեմ, և ես այն եմ որ ամէն
օր զհացն թագաւորին տանիմ, որ
ուտէ։ Եւ խրատեաց զմարդն,
թէ ինչ որ տայ քեզ՝ մի առնուր.
և ասա՛, մէկ հեղ բեր որ լեզու իմ
'ի բերան քո հասուցանեմ։ Եւ ան
ցոյց զքօղ յերեսս մարդոյն. և ա-
ռեալ գնաց առ թագաւորն։ Եւ
թագաւորն ասաց՝ ով մարդ՝ ուզէ
զինչ կուզես՝ տամ քեզ. և նա ա-
սաց՝ թէ բեր լեզուս 'ի բերան քո
հասուցանեմ։ Եւ իբրև հասոյց
զլեզուն 'ի բերանն յայնժամ ու-
սու ծամ կենդանեաց լեզուս. գա
զանեաց, և թուչնոց։ Եւ յորժամ ել
'ի ծովէն, և գնաց պառկեցաւ 'ի
վիմին տակն։ Եւ եկեալ թռչուն մի
նստաւ իվ՛ր վիմին. և ասէր, թէ
այս մարդս ո՛չ գիտէ՝ զինչ կայ թա-
ղած 'ի վիմին տակն։ Եւ ասացնմա

ծո

ծովային Թագաւորն. Թէ բանդ-
մարդոյ մի ասէր. Թէ ասես չես ապ-
րիր. և զոր լուաւ 'ի Թռչնոյն՝ ել և
էհան 'ի վիմի տակէն. և տարաւ 'ի
տուն իւր: Եւ կինն խոշտանկեաց
զայրն իւր, Թէ այս ուստի է. և
նա երկնչէր 'ի մեռանելոյ՝ և ոչ
ասէր: Եւ յորժամ կարի ստիպեաց
անզգամ կինն այն զայրն իւր Թէ
ասա. Յայնժամ խոստովանեցաւ
մարդն, և հաղորդեցաւ. զի երբ-
ասէր մեռանէր: Յայն գիշերն խօ
րօզն երեքանգամ ծափ էզարկ՝
խօսեցաւ: Եւ շունն հաչեաց, և
ասաց. Թէ ուրախութբ՟ ծափտաս՝
և խօսիս. վաղն պիտի մեր տէրն
մեռանի. և մեք անտէր մնամք:
Եւ խօսօղն ասաց՝ Թէ ես ինչ առ-
նեմ Թէ մեռանի՝ ես քառասուն
կին ունիմ, և իմ հուքմն պահէ
զնմ: Եւ շունն ասաց Թէ խիստ ան-
զգամ չար է՝ ասաց խօրօզն՝ Թէ այդ-
բանդ հեշտ է. երբ լուսանայ, Թող
երԹայ 'ի լեառն և կտրէ զ.քառա
սուն կաղնի ջաղոտ: Եւ ասէ ցկինն
իւր

իւր՝ թէ ասեմ զպատճառն. և կինն
յանձն էառ. և յորժամ զքառա
սուն կաղնի ջալոտ մանրեմ ի վ̃ր̃ քո՝
ապա գիտեն աս զպատճառն. և յոր
ժամ կարի զօրութբ̃ էհար զկինն
մէկ անգամ. ասաց կինն թէ ինձ ոչ
պիտի պատճառն այն: Ու այրն ա-
սաց՝ խաղաղեաց՝ որ ուսուցանեմ
քեզ. և կինն երդումն էառ յանձն
թէ այլ ո՛չ հարցանէ զպատճառն
թէ ուստի է: Ցուցանէ զառակս:
Ու է շատ մարդ կայ՝ որ զխորհ
ուրդն կնոջն ասէ. նա կինն զայր 'ի
գլխոյ հանել տայ: Ու պարտէ մար
դոյն որ զա̃մ բարութ̃ն առնէ կնոջն.
զի մի մարմին են. բայց զխորհ
ուրդն ո՛չ յայտնէ այսպիսւոյն:

Այր մի, և ունէր կարի սիրուն ճլէ
սիրելի մի: և գնաց այրն այն 'ի
գինարբուսն 'ի մաճլիս: և սիրե
լին անդ ո՛չ էր: Ու իբրև խորին գի
շեր եղև. յիշեաց զսիրելին իւր՝ և
գնաց առ սիրելին 'ի մէճլիսն. և
սիրելին մեծարեաց զնա. և նստոյց
առ

առ ինքն . և անդ քառաւատուն մարդ-
կայր՝ և ամէնն գաւաթ ետուն . և
սիրելին ո՛չ ետ՝ զի խիստ գինով էր .
և խնայեաց 'ի նա ։ Եւ յորժամ ան-
կաւ 'ի գինւոյն առեալ զնա 'ի շա-
լակն՝ տարաւ 'ի տուն իւր ։ Եւ ասաց
դու ով ես որ տանիս զիս՝ և նա ասաց
ոչ ճանաչես զիս եղբայր, և յայնժամ
գիտաց՝ որ սիրելին էր ։ և ասաց թէ
ամենեքեան ինձ գաւաթ ետուն .
և դու ոչ ։ Տայր իւր՞ գլխոյն, և ծե-
ծեաց զնա մինչև 'ի տուն . և սիրե-
լին ոչ եթող զնա . մինչև պառկե-
ցոյց զնա՝ և անկողնով ծածկեաց ։
Եւ երբ լուսացաւ . իմացաւ զե-
ղեալսն՝ և ամաչէր ։ Եւ ասաց կնոջն
զենէք զզուարակն՝ և բերէք զմեր
սիրելին՝ և պատուեմք ։ Ցուցանէ
առակս ։ Մարդ մէկ հետ՝ կամ եր-
կու՝ կամ երեք . զսիրելւոյ ճաւլրն
վերցնէ . նա յետին խայր պիտի
լինի ։ Եւ յորժամ գնաց սիրելին՝
թէ 'ի տունն մեծարէ զմիւս սիրե-
լին, անկաւ յոտս նր՞՝ և ասէ ։ ով եղ-
բայր, մի մեղադրէր ինձ ։ Եւ միւս

սի

օրհնելին ասէ. ով եղբայր, համբե
րելով լինի՝ որ չարն 'ի բարի դառ
նայ. և լինի զուարակն պարարակ:

Նունենին ասէր ընդ ձիթենին՝ ՃԼԸ
թէ ես կարմիր նուռն ունիմ.
և աղէկ եմ քան զքեզ: և ձիթենին
ասէր ընդ նունենին. թէ ես պտղա
տու եմ, և ձէթ շնորհեմ լուսատու
մարդկան: Ցուցանէ: նունենին
զթագաւորն. և ձիթենին զքահա
նայն. քանզի թէպէտ և գեղեցիկ է
թագաւորն. այլ ո՛չ աժէ 'ի քահա
նայն, քահանայն աժէ 'ի թագաւ
որն. զի քահանայն հալածիչ է
խաւարի՝ որ հալածէ զխաւարն
'ի հոգւոց մարդկան:

Զուկն յորժամ 'ի ջրոյն 'ի
դուրս ելանէ՝ նա մեռանի: ՃԼԹ
Ցուցանէ: թէ մարդն որ 'ի պա
տուիրանացն Ա.Յ 'ի դուրս ելանէ
նա մեռանի հոգւին. և յետ մահուն
հոգւին և մարմինն տանջի:

Զուկն

ՃԽ Ձուկն յորժամ 'ի կեռն գայ և
առնու. նա մեռանի 'ի ձեռն
կարթին: Յուցանէ: Յորժամ
մարդն 'ի մեղքն երթայ և գործէ,
նա մեռանի ի ձեռն սատանայի. ոպ̃
մեռանի ձուկն ի ձեռն կարթին:

ՃԽԱ Իմաստասէր ոմն աղքատ ունէր
ծոյլ որդիս՝ և 'ի ժամ մահուն
կոչեաց զորդիսն. և ասէ: Ով որդե-
ակք. բազում գանձ կայ պահեալ
'ի հարցն իմոց յայգին մեր. իսկ
զտեղին ոչ ցուցանեմ ձեզ. այլ
որ աշխատի, և խորագոյն փորէ,
նա գտանէ զգանձն: Եւ յետ
մահուան հօրն, սկսան որդիքն ջա
նալ մեծաւ աշխատութ̃բ. և խորա
գոյն փորէին. և ամէն մէկ իւրն ջա
նայր զի ինքն գտցէ զգանձն: Եւ
սկսաւ այգին աճիլ, և զօրանալ.
և ետ բազում պտուղ. և ելից զնո̃
գանձիւ: Յուցանէ առակս: Թէ
մեծ բարի է աշխատանքն. և շատ
օգուտ է յայս կեանքս, և յայն:
Իսկ յուլքն, ոչ աստ բարի ապրին.

և ո՛չ անդ վայելեն, ո՞չ ասէ գիրն.
յուլից, և ծուլից փակեալ է
դուռն արքայութեան:

Մասն յառակաց՝ թէ այր մի զգայլն ՃԽԲ
բունեալ էր. և զոտներն կապեալ
և ի վերայ իշուն բարձեալ տանէր
'ի տուն. և մարդիկք 'ի դէմ դի
պեալ ասեն, թէ այդ ի՞նչ է որ իշոյդ
ես բարձեալ. Ասէ այրն. թէ կու
տանիմ 'ի տուն՝ որ կթեն, և իմ տը
ղայոց բերանն թանայ: Յայժամ
ասեն արքն. ո՛վ տխմար, դա զամէն
աշխարհիս կթան է հատուցեալ.
զայդ կթան կու տանիս:

Մասն յառակաց՝ թէ գայլ մի եղա ՃԽԳ
նէր ի վե՛ր լերին. ետես 'ի ստորոտ
լերինն գեհ մի ոչխարաց, և ասաց
խաղաղութիւն ընդ ձեզ. Իսկ
ծերագոյն խոյ մի յոչխարացն
ասէ 'ցընկերսն: եղբարք թէպէտ
խաղաղութիս աւետարանեն՝ ա-
պա դուք ամէն մէկ ձեզ Ճար
արարէք:

ճխդ

Ասի յառակաց՝ թէ այր մի՛ զէշ
իւր կորուսեալ էր. և խիստ
աղէտալի 'ի շուրջ գայր, և խնդ-
րէր: Իսկ տեսեալ գայլուն ասէ՝
այր դու զինչ խնդրես: Ասէ այրն
ով գայլ զիմ էշուկս կորուսեալ
եմ. և չեմ գտանուլ: Ասէ գայլն, ով
այր զքո էշն ես գտի: Ասէ այրն
բեր զէշն՝ որ տամ զքո գտնելէն:
Ասէ գայլն, ով այր դու՝ զքո էշն 'ի
չամուռն էր անկեր. և ես երէք
օր 'ի հետն եմ դատել. և ապա
կարացի 'ի դուրս քարշել: Իսկ 'ի
վարձին տեղն զէշն կերի. գիտէի
որ աղքատ մարդ էիր. և ինձ վարձ
չկարէիր տալ:

ճխե

Ասի յառակաց. թէ այրի ոմն ու-
նէր տասն այծս: և ունէր որ
դեակ մի. և որդին այն յամէն օր տա
նէր արածէր զայծերն: Իսկ մայրն
յամէն օր շերեփ մի ջուր լնոյր 'ի
կաթն. և 'ի խափ տայր: և ասէ որ
դին ցմայրն իւր. թէ էր առնես
զայդ վնասդ, որ զջուրն 'ի կաթն
լնուս

ընուս. և'ի խափ տաս։ Ասէ մայրն՝
որդի մեր կաթնս քիչ է՝ այնոր
համար առնեմ թէ քիչ մի աւելի
լինի մեր կաթն. որ մեզ ձմռանս
թացան լինի։ Իսկ յաւուր միում
մինչ դեռ արածէր մանուկն զայծ
իսն։ փոքր մի ամպ ծնաւ յերկինքն,
և եկն անձրև. և եղ հեղեղ՝ և տարեալ
զայծիսն ելից 'ի գետն։ Իսկ մա
նուկն եկն յարևու առ մայրն դա
տարկութբ. և միայն փայտն 'ի
ձեռինն։ Ասէ մայրն, որդի ուր են
այծքն. և զի՞ արդ յարևու եկիր
այսօր։ Ասէ որդին, մայրիկ իմ.
այն չերեփ ջուրն, զոր 'ի կաթն
խառնէիր, և'ի խափ տայիր. նա
ժողովեցաւ, և հեղեղ դարձաւ.
և եկեալ զմեր այծերն տարաւ 'ի
գետն ելից։ Յուցանէ առակս թէ
Ամ դատաստանն արդար է. որ
թէպէտ զկատարեալ հատուցումն
զրկողացն 'ի հանդերձեալն պիտի
առնէ, նա զճաշնին 'ի յայս կեանքս
կու հատուցանէ։ Ո որ տեսեալ
մարդկան հաւատան՝ թէ գոյ հա

տուցումն 'ի հանդերձեալ դատաս
տանին՝ և առցէ իւրաքանչիւր ոք
ըստ գործոց իւրոց։

ձխգ Ասի յառակաց թէ 'ի բաղդատ
քաղաքն՝ հիւս մի ճարտար արո
հեստիւ. երէք ամ աշխատեալ.
և 'ի յամբրաւի կտէն սեղան մի
յիբեար ձգեաց զանազան յօրի
նուածովք՝ որ ո՛չ էր տեսեալ ակն
մարդոյ այնպիսի ինչ։ Եւ տարեալ
թագաւորի քաղաքին այնորիկ։ կար
ծէր թէ քաղաք՝ կամ գիւղ՝ կամ
այլ ինչ պարգևս տացէ նմա։ Իսկ
նր տեսեալ զարմացաւ. և ուրա
խացեալ ետ նմա հազար ապիտակս՝
և նր առեալ զապիտակն. և ելեալ
արտաքոյ դրանն նստաւ տրտում։
Եւ կամէր 'ի յետ առ թագաւորն
յուղարկել. և մինչ դեռ տրտում
նստեալ էր 'ի դրանն. եկն այր
մի, և ունէր 'ի ձեռին իւրում սա
լայով մի վարդ. և տեսեալ զհիւսն
տրտում։ Նա հարց, թէ այր դու՝
ընդէր ես տրտում, և զինչ պատ
ճառն

Ճառն քո։ Յայնժամ ասաց. Թէ երեք տարի է՝ որ ՚ի յամբարաւի կոտէն չարչարանօք զսեղան մի շինեցի, որ ՚ի հազար հիւսէն մէկն չկարէ շինել այնպէս։ և բերի Թագաւորին՝ Թէ ինձ գիւղ կամ քաղաք մի տայ. Նա զայս հազար դրամս ետ. կուզեմ որ յետուղարկեմ։ Եւ այրն որ սալայոյն վարդ ունէր ասէ ցհիւսն՝ դու ըղորդ ես. այս Թագաւորս զփէշքաշարի հարկիսն չգիտէ։ Ես այլ փէշքաշար եմ. և այսչափ տարի է յայս դուռնս կու գամ, Նա ինձ իրք մի չէ տուեալ։ Եւ ասէ հիւսն ցվարդաբերն՝ դու ինչ արուեստ գիտես. և նա ասէ Թէ զայս սալայս ես կու զուգեմ։ Իսկ հիւսանն հանեալ զուրագն ՚ի գօտւոյն՝ եդ ՚ի վ̃ր միոյ գիհաց մուրուացն սալազուգին, սրբեաց մինչև ՚ի վայր ոտ̃ մաքրչով։ Եւ նորա մտեալ առ Թագաւորն այնպէս խախք գլմօք՝ տարաւ զվարդն։ Ասէ Թագաւորն, ով այր դու, ընդէր այդպէս խայտառակ երեսօք

եկեալ

եկեալ եւ առ իս։ Եւ նա ասէ, ով թա
գաւոր՝ այր մի ՚ի դրունս տեսի որ
տրտում նստեալ։ և հարցի՝ թէ վասն էր
ես տրտում։ նա ասաց՝ թէ երեք
տարի է՝ որ աշխատանօք ՚ի յամբ
րաւի կոտէն սեղան մի շինեցի, և բե
րի թագաւորին՝ թէ ինձ գիւղ կամ
քաղաք տայ. նա զայս հազար ոսկի
տալիս եր. այնոր համար եմ վիրա
ւոր. և կուզեմ որ յետ ուղարկեմ։
Ես ասացի՝ թէ ես այլ փեշքաշ
եմ թագաւորին. և թագաւորն ոչ
ինչ փեշքաշի հարկիք չգիտէ։
Եւ է հարց՝ թէ զինչ փեշայ գիտես։
ասացի թէ սալա և քթոց կուզու
դեմ, նա զուրագն քաշեաց ՚ի գօ
տւոյն. զմէկ դեհի մօրուս այսպէս
՚ի վայր էհատ։ Եւ առ ժամայն
կոչեաց զհիւսն, և ասէ։ Ճ՞շմարտա
րև դու արարեր ուրագով զայս
մարդոյ մօրուսն. և նա ասէ այո։ և
ասէ թագաւորն՝ թէ երդումն ՚ի
գլուխ իմ, որ զմիւս դեհի մօրու
աց այլ ածցես նոյնպէս ուրագովն
որ ես տեսանեմ։ Եւ եդեալ հիւ
սանն

տանն ղուրագն իվր̃ միւս դեհի ե-
րեսացն էած, սրբեաց նոյնպէս։
Ասէ թագաւորն, թէ նստեալ գրե
ցէք զգիւղն յորում ինքն կայ ին
քեանն մուլք յազգաց յազգս։ այնպ̃
արարեալ էառ զգիրն, և դարձաւ
՚ի տունն իւր։ Յուցանէ առակս։
Թէ ոչ աստեղք զարեգականն
գեղեցկութ̃ի փառաւոր ցուցա
նեն. այսպէս և փանաքի արուեստք
զապականութիւն մեծամեծ արո
ւեստացն յայտնի առնեն զարու
եստս իւրեանց։

Ասի յառակաց՝ թէ այծ մի իվերայ Ճխէ
բարձր պատին կայր նստած։ և
գայլ մի եկն նստաւ յատակս պա
տին։ Հայեցեալ ընդ նա այծն ասէ՝
սիրտս կուզէ որ իջնում ՚ի վայր.
և եղջերովս զայն գայլին փորն
պատառեմ։ Յայնժամ ասէ գայլն,
երանի էր իմ աչացս՝ որ տեսանէի՝
թէ այծն գայր եղջերովդ, զիմ
փորն պատառէր։ Յուցանէ ա-
ռակս։ Թէ անխմաստ մարդն տե

սա

սանէ զինքն, կարծէ յաղթող գոլ
մեծամեծաց՝ յաղթեալ ՚ի ձեռա
նց անկանի, յայնժամ երևի տկա
րութի նորա։

Ճխր Ասի յառակաց՝ թէ կին մար
դոյն. երեք երեսի ջուր կայ.
մէկ կուսութե քողն՝ որ յառաջ
քան զամուսնանալն ՚ի մօրէն ու
նի, և ՚ի ժամանակ ամուսնութեն
քակի. զի յետ այնորիկ, ոչ ասի աղ
ջիկ՝ որ է կուսան, որ է հատեալ։
Երկու երեսի ջուր կնոջն, որ մինչ
դեռ զաւակ չէ ծնեալ. և յորժամ
ծնանի զառաջին զաւակն լուծանի
կապ ծննդականութե. և արձա
կեալ յառաջ բերէ զմանուկն. որ
ով յայտնի հրապարակաւ ՚ի լուր
ամենեցուն, թէ այս անուն նորա
հարսն զաւակ ծնաւ։ Նա և այ
նու հետև առանց ամօթոյ առեալ
զմանուկն ՚ի գիրկ. և ելեալ նստի
՚ի հրապարակս, և բացեալ զփիրոն,
և զստինսն ջամբէ մանկանն, և ոչ
ամաչէ։ Երեք երեսի ջուր կնոջն,
քա

քանի է առաջին մարդոյն՝ ՚ի ձեռն պատկին կապեալ. և յորժամ. հան դեպի, զի ելցէ յառաջին յառնէն. և լինի առն այլում. յայնժամ երեք կերպ երեսի ջուրն՝ որ է ամօթն բարձաւ յայնպիսի կնոջէն: Եւ յայնմ հետէ, զի այլ ոչ ունի երեսի ջուր ոչ ամաչէ յումեքէ. այլ զորինչ կամի, և կարէ՝ անար գելաբար գործէ. վն որոյ ՚ի շունն կայ արգելք, կամ ամօթ՝ և յայն պիսի կինն ոչ: Յուցանէ առակս: Թէ բանականութե արգելք ՚ի մե ղաց՝ ամօթն և երկիւղն է. ըստ այնմ, Թէ երկիւղիւ Տն խորշի ամ րդք:

Ասի յառակաց. Թէ այր մի յամէն տարի հարիւր մոլթ հաց վաս տակէր, և այնու զտուն իւր կա ռավարէր: Եւ ՚ի միում տարւոջ ՚ի հարիւրէն քսան պակաս հաց եղև: Նա անդադար հոգայր և կո ծէր զինքն. Թէ այսչափ հացովս ՚ի նորն զիարդ կարեմք ելանել: Իսկ Ած յանդիմանել կամեցաւ զնա: ա- Ճխթ

ուա

ռաքեաց զհրեշտակ իւր. և ասաց
նմա. թէ արի, երկու մոթ հաց
բարձիր. և տար կնոջ մի այրւոյ
որ ունի դուստր մի միամօր: Նա
բարձեալ գրաստուն տարաւ առ
այրի կինն՝ թէ զհացս զայս Տր առա
քեաց քեզ: Նա ասէ պառաւ կինն
ցդուստր իւր. արի, որդեակ՝ առ
զհացն զոր Տր առաքեաց մեզ: Իսկ
աղջիկն ասէ ցմայրն՝ ճաշոյ հաց կե
րեալ եմք. և երկու բլիթ այլ կայ 'ի
սապատն որ երեկուն ուտեմք. և
վաղուէեանն Տրն և պատրաստօղն
Տր է: և ասացին մայրն և դուստրն
ցայրն՝ որ զհացն էր բերեալ թէ ո՞ր
դի, տար զհացդ քո այլ ումեմն աղ
քատի՝ որ զաւուրս կերակուրն չու
նի այդ աւելորդ է մեզ: և այրն զար
մացաւ ընդ մեծահաւատութի
կանանցն այնոցիկ: Ինքն յամօթ
եղև՝ որ զութսուն մոթ հացն ու
նէր. հոգայր, և ցաւէր, թէ 'ի նորն
զիա՞րդ կարեմք ելանել: Յուցա
նէ առակս: Թէ որք բազում ու
նին, և միշտ հոգան. թէ զիա՞րդ
պի

պիտի ապրիմք. յանդիմանին յայն ցանէ, որք զաւուր կերակուրն մուրանալով գտանեն. և միշտ գոհանան զԱ՟ծ, և ոչ յուսահատին:

Ասի յառակաց. թէ աղքատ երեց ՃԺ
մի գնաց մօտ մսագործն, թէ ինձ սակաւ մի միս տուր՝ որ իմ տղայոցն տանիմ, որ եփեն և ուտեն: Իսկ մսագործն ըստ կատակս համարեալ, ետ նմա լիտր մի միս. և ասաց թէ իմ հօրն պատարագ արա: Եւ երիցուն ըստ արդարս համարեալ էհարց զնա. թէ քոյ հօր անունն ինչ է, և մսագործն ասաց՝ թէ իմ հօր անունն մկսար է՝ զոր ոմանք սատուրի կոչ՟ասեն: և երթեալ երիցուն 'ի տուն իւր, և տարաւ զմիսն տղայոցն. և գնացեալ չինեաց զպատարագն. և յիշեաց զմկսարն յանուանէ 'ի պատարագն: Եւ 'ի յազդմանէն Ա՟ծ մսագործի կոչ՟ն արմատացաւ՝ և ամ՟ առաստաղն խանութին պատառեալ բարձրացաւ.

ցաւ։ Իսկ խանութպանն զար
հուրեալ գնաց անկաւ յոտս քա
հանային. թէ զով յիշեցեր 'ի պա
տարագն։ և նա ասէ, զմկսար ա-
նունն զոր դու տացեր. թէ իմ
հօր անունն մկսար է։ Իսկ նորա
զայս տեսեալ աղաչեաց կրկին պա
տարագել և իսկապէս զհայրն իւր
յիշել։ Ցուցանէ սուակս։ Թէ մի
խառնեք զի զօրութին Քի ոչ ար
համարհի, և ոչ տկարանայ այլ
յամի զօրաւոր և սքանչելագործ
է Քս։

ճծա
Ասի յառակաց՝ թէ արք երկու
ընկերացեալք միմեանց. և աղ
քատակերպ 'ի շուրջ գային իվր
երկրի. և զայն ստացեալ գործ
իւրեանց. և յաւուր միում եկին 'ի
քաղաք մի. և կամէին մտանել 'ի
նա։ Եւ եկեալ 'ի մին դուռն տեսին,
զի գլուխ մարդոյ կախեալ կայր
ընդ դուռն 'ի վայր. և ոչ կամեցան
մտանել։ Ասացին թէ գնամք ընդ
միւս դուռն մտանեմք, որ գլուխ չէ
կա

կախած. և այնպէս զա̃մ դրունս
քաղաքին 'ի շուրջ եկեալ ոչ գտին
զդուռն՝ որ ոչ կայր մարդոյ գլուխ
կախած. և նաչարեալ մոտին ընդ մին
դուռն 'ի ներս քաղաքին։ Եւ հար
ցեալ ընդ դռնապանն թէ ինչ
պա̃ճառ է, որ ձեր քաղաքիս յամէն
դրունս մարդոյ գլուխ է կախած.
և նորքա ասեն՝ թէ այդ գլխնիդ՝ ա-
մէնն օտար և ղարիպ մարդկանց է։
Եւ մինչ դեռ նոքա զպատճառն
հարցանէին. էհաս հրաւիրակ 'ի թա
գաւորէն որք զղարիպ մարդիկն
կոչէին. զայն երկու մարդն այլ տա
րան թէ թագաւորն կու կոչէ։ Եւ
յորժամ գնացին, թագաւորն մեծա
րեաց զնս̃, և եդ առաջի նց̃ սեղան
ամենալից. և պատուեաց զնս̃ ա-
նուշահամ գինւով։ Եւ եղև կարիս
միոյն 'ի նոցանէ՝ և ել արտաքս վասն
կարեաց։ Յայնժամ ասէ թագաւ
որն ցայն որ 'ի տանն էր մօտ յինքն
թէ ափսոս չէ որ քո պէսի հարկաւոր
մարդն հետ այնպիսի անբախտ մար
դոյն շրջի, և զքո լաւ անունդ վա̃

դո

դորա վատ անուն առնել։ Յայն
ժամանակ այլն, ոչ այդպէս է ով
բարի Թագաւոր, այլ այն ընկերն
իմ այնպիսի Թագաւորի որդի է՝ որ
ձեզ վայելէ նորա հօր փառքն և
Թագաւորութիւն։ և վս Այ սիրոյն
այն ամենևին Թարկն տուեալ է և
աղքատի կերպ 'ի շուրջ կուգայ. և
առ ժամայն եկն 'ի տունն այլն, որ
'ի դուրս էր։ Եւ ժամ մի կացին, ել
և միւսն 'ի դուրս 'ի պատճառս կա
րեաց։ Եւ դարձեալ ասէ Թագաւորն
ցայն որ 'ի մօտն էր, թէ կու թուի
ինձ որ հարկաւոր մարդոյ որդի ես՝ և
Թագաւորի զարմէ ես. ինչ պատեհ
է՝ որ այդ ձմրի մարդդ հետ քեզ
'ի շուրջ գայ. և զքո հարկաւոր
անունդ աւերէ։ Իսկ նա ասէ
ցԹագաւորն. գիտեմ զի թէ Թա
գաւորի որդի եմ, և թէ իշխանի.
և կամ զինչ և իցէ մարդոյ. իմ հօր
տունն դորա հօր Թափուն է չէն
կացեր։ և յԱյ 'ի վայր, մեզ երախ
տաւոր դորա ազգն է։ Իսկ Թագաւ
որն առ ժամայն ետ նոցա երկո
ցունցն

ցունցն մէկ ձի սարօքն հեծնելոյ. և
մէկ քօթալ՝ և մէկ ծառայ. և շատ
արծաթ, և ոսկի. և ո՛չ սպան զնոսա,
այլ խաղաղութեամբ ուղևորեաց, որք
գնացին զճանապարհն իւրեանց:
Իսկ երբև հարցին ցթագաւորն,
թէ ընդէր զայլ զարիպօն սպանա
նէիր՝ ասէ. վն զի այլ զարիպ մարդ
չգտայ՝ որ միմեանց լաւ էին ասա
ցեալ. վն այն սպանանէի զնոսա. և ոք
որ միմեանց լաւ ասացին խլաթեցի.
և հարկաւոր ուղղոյ գրի: Ցուցանէ
առակս: Թէ որք զընկերս իւրեանց
առաջի օտարաց չարաբանեն.
ինքեանք ընդ նմին պարսաւին, և
՚ի պատուո՛յ. և՚ի գլխոյն ևս ելանեն:
Ասա այնմ, թէ որ արհամարհէ
զիւրեօք՝ արհամարհի և ինքն ՚ի
նմանէ. և որ զընկերն առաջի
օտարաց բարեբանէ. ինքն գտանէ
զշահն և զօգտութիւն, և ապա
ընկերն:

Ասի յառակաց՝ թէ այր մի խիստ ՃԾԲ
պարտական էր, և ոչինչ ճար չու
նէր

նէր ազատելոյ՝ և խիստ հոգայր,
ևնեղիւր՚ի պարտատիրացն. և յա-
ւուր միում ասէ մի ոմն՚ի պարտատի
րացն ցնա, ես քեզ խրատ մի տամ,
որ յամենեցուն պարտուցն ազա
տիս. ապա զիմ պարտքն վճարէ ասէ
ցնա պարտականն, թէ թող Ա՛ծ
վկայ լինի. որ զքոյն վճարեմ՝ լուկ
ճար մի արա՛ որ զայլոց պարտսն
վճարեմ. ասէ խրատատուն, թէ
ով որ գայ՚ի քեն պարտք ուզէ,
դու ասա՛ թէ խամ, և այլ ոչ ինչ
մի ասեր: Յայնժամ պիտի առնուն
զքեզ դատաւորի մօտն տանին.
դու առաջի դատաւորին այլ ոչ
ինչ մի ասեր՝ բայց միայն ասա՛ թէ
խամ: Իսկ դատաւորն պիտի ասէ,
թէ այդ մարդդ խենէ և յիմար՝ յում
մէ կուզէք զպարտսն, թողէք՝ որ
գնայ յիւր բանն. և այնպէս պարտա
կանն ազատեցաւ՚ի պարտուցն: Յե-
եկեալ խրատատու պարտատէրն՝
ասէ ցպարտականն. այժմ որ ազա
տեցար իմ՝ խրատովս. բեր զիմ պար
տքն տուր՝ նա նմանապէս և նմա

 ասաց

ասաց խամ։ Իսկ նր̃ առեալ զնա
գնաց առ դատաւոր քաղաքին. և
սկսաւ դատաւորն հարցանել զնա՝
թէ այդ մարդ ասէ. թէ յիսուն
կտոր լուացած հաճաղ պարտի
ինձ տալ։ Օ ինչ ասես, պարտիս թէ
ոչ՝ և նա սկսաւ ըստ առաջնոյ պա
տասխանւոյն և ասաց՝ թէ խամ։
Յայնժամ ասէ պարտատէրն ցնա՝
թէ լուացած չկայ թող խամ լինի
ընդ քո բանիդ. և այնպիսի ճար
տարութբ̃ էառ 'ի նմանէ զպար
տսն։ Ցուցանէ։ Թէ անիրաւ
ութն առնելն ոչ միայն 'ի հանդեր
ձեալ դատաստանին պիտի խայ
տառակի. և ուրացութ̃ին իվերայ
հոգւոյն պարտք մնոյ. և ամօթն
զոր մարդկան առաջի կրէ։

Ասի յառակաց՝ թէ երկու արք մի ճծէ
աբանից յոյժ բարեկամք գնա
ցեալ 'ի ճանապարհորդութ̃ի և
մինն զենեալ 'ի վաճառն. և միւսն
շահեալ փարթամ, դարձան և դայ
ին 'ի տունս իւրեանց՝ և եկեալ մօ

տացան 'ի քաղաքն, ասէ աղքատ ընկերն ցհարուստն թէ եղբայր. շատ բարութիս, և սէր գիտեմ 'ի քէն, նա ամենեցուն գլուխն այս է, զոր 'ի խնդրեմ 'ի քէն, և 'ի վերէ քան զամէնն. պիտիր՝ որ ինձ եղբայրութին առնես՝ հազար սպիտակ փոխ տաս ինձ. որ այս տարի զիմ տանն, և զիմ տղայոց պէտքն լնում. և յայլ տարի յայս օրս զքո դրամն վճարեմ. այնպ հաշուեաց՝ թէ զիմ տղայսն 'ի գերութենէ գնես քո հոգւոյդ համար։ Իսկ նր լուեալ զայս պարզմտութե ետ հազար դրամն խղճալով աղքատութե նր. և ելեալ 'ի տեղւոջէն գնացին 'ի տունս իւրեանց։ Ու իբրև լցաւ տարէ գլուխն. երթեալ տուող դրամին առ պարտականն, և ասէ. տարի մի բոլոր եղև, հիմայ զիմ դրամն տուր՝ որ իմ տանն, և իմ տղայոցն 'ի պէտք անցուցանեմ։ Իսկ նր պատասխանի տուեալ ասէ. ես քեզ դրամ չպարտիմ, և յորժամ բռնադատեաց՝ ասէ ցնա, եկ՝ որ եր

թամք

թամք 'ի դատաստան առ դատա-
ւորն։ Եւ յորժամ եկին, ասէ դա-
տաւորն ցերկուսն, զդրամն առեալ
ես թէ ոչ. և ցոմն թէ վկայ և գիր
ունիս։ Եւ իբրև գիտաց թէ
ոչ գիր կայ, և ոչ վկայ 'ի մէջն, ա-
սէ ցայրն որ զդրամն էր տուեալ.
թէ յայն տեղն ուր ետուր զդրամն
'ի դա՝ մարդ կայր 'ի մօտն,
դրաստ կայր, ձի կայր. ասէ տու-
ող դրամին, թէ ոչինչ չկայր 'ի
մօտ մեզ՝ 'ի վեր Ած էր, և 'ի վայր
մեք երկուքս։ Սա ողոքելով խընդ-
րեաց, և ես խղճացի և ետու. այժմ
ուրանայ։ Ասէ դատաւորն, 'ի
յայն տեղն՝ ծառ կայր՝ թուփ կայր
քար կայր. ինչ տեղ էր այն տեղն։
Ասէ դրամի տէրն՝ ոչ ծառ կայր՝ և
ոչ թուփ՝ լոկ քարատակ մի է.
Նստաք անդ, համարեցի և ետու
յինքն, և ելեալ եկաք իմիասին 'ի
քաղաքն՝ դա յիւր տունն, և ես
յիմ տունն։ Ասէ դատաւորն ցդրա-
մին տէրն՝ կարես զքարն զայն բե-
րել՝ կամ կոտրել 'ի յայն քարէն. և

Նշան

Նշան բերել։ Իսկ նա 'ի դուրս վա
զեալ 'ի դրամին կսկծոյն՝ թէ գնամ
զայն քարն լծօք բերեմ կամ կոտ
րեմ, և նշան բերեմ։ Եւ յորժամ
գնացնա, ասէ դատաւորն ցմիւսն՝
որ 'ի մօտն մնաց՝ թէ կարէ զնա շար
ժել 'ի տեղիացն. կամ կարէ կոտ
րել, և նշան բերել։ Ասէ՝ որ ուրա
նայր զդրամն։ Թէ զհազար լուծք
լծէ՝ չկարէ զայն քարն շարժել
'ի տեղեացն. և թէ հազար քար
գործ բերէ՝ չկարէ կտոր մի կոտ
րել՝ զի ապառաժ քար է։ Յայն
ժամ դարձուցեալ զայրն 'ի յետս,
որ գնայր. և ասէ ցուրացող դրա
մին, թէ գնա՛, և տուր զիւր դրամն
յինքն, զի դու եղեր վկայ՝ որ պար
տիս. և այնպէս յամօթեղեալ
վճարեաց զպարտսն։ Յուցանէ
առակս, թէ դատաւորն այնպէս
պարտէ լինիլ. որ 'ի դատաստան
առնելն, բանին ելք գտանէ. որ զի
րաւունսն Ա̃յ չթողու։ ըստ այնմ,
որ ասէ սաղմոսն. որ հանճարեղն
իցէ, զառաջնորդութ̃ի։
Ասի

ՃԾԴ

Սակ յառակաց՝ թէ միակեց մի սատանայի ուխտ եդ. որ տարի մի ՚ի պահս կենայ. թէ զնա ՚ի մեծութիւն հասուցանէ. սատանայ յանձնէառ կատարել զխնդրուածսն։ յորժամ վճարեաց զպահսն շարժեաց զեպիսկոպոս քաղաքին. որ եդ զնա եկեղեցապան. և ՚ի միւս տարւոյն շարժեաց՝ որ օրհնեաց զնա աբեղայ. և ՚ի միւս տարւոյն եղև մեռանիլ եպիսկոպոսին՝ շարժեաց զթգրն, և զքաղաքացիսն. առնել իւրեանց եպիսկոպոս։ Նոյն յորժամ կամէր զգեստաւորիլ՝ զի ժամ արասցէ, եկն սատանայ՝ եռ ՚ի նմա փոքրիկ չորեքաղի մի, և ասէ. իմ ամէն լաւի փոխարէն. որ զքեզ յայդ մեծագոյն աստիճանդ հասուցի, զայս արա. առ զայդ փոքրիկ չորեքաղիդ ՚ի ծոցդ դիր. և զզգեստդ իւր հագիր։ Նոյն յորժամ ՚ի բեմն ելանէր. նա մէկ մատամբքդ իվերայ մէկ լարէն զարկ. և այնպէս արարեալ պատարագ եպիսկոպոսին. յան կարծակի հազարք հազարաց, և

բիւրք

